

ՆՎԻՐՎՈՒՄ Է
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՌՈՍՏԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԾԱՂԻԿ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆՑ



FLOR DE TRADUCCIONES

FIORE DI TRADUZIONI

Կազմեց Հասմիկ Բաղդասարյանը

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019

ՀՏԴ 82-8
ԳՄԴ 84(4)
Ծ 211

Հրատարակության են երաշխավորել ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտ-խորհուրդը և ռոմանական բանասիրության ամբիոնը:

Թարգմանության խմբագիրներ՝
Հ. Բաղդասարյան, Ա. Մանուկյան,
Լ. Սարոյան, Ա. Ստեփանյան

Revisión de traducciones/Revisione di traduzioni:

H. Baghdasaryan, A. Manukyan, L. Saroyan, A. Stepanyan

Ծ 211 Ծաղիկ թարգմանությանց / Կազմող՝ Հասմիկ Բաղդասար-յան – Եր.: 2019. – 152 էջ:

Ժողովածուն «Ծաղիկ թարգմանությանց» մատենաշարի չորրորդ հատորն է, որն իր մեջ ամփոփում է ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի ռոմանական բանասիրության ամբիոնի իսպանական և իտալական բաժին-ների ուսանողների և դասախոսների կատարած թարգմանու-թյունները՝ իսպաներենից, իտալերենից և պորտուգալերենից հայերեն, ինչպես նաև հայերենից իսպաներեն և իտալերեն: Ժողովածուի մեջ ընդգրկված արձակ և չափածո ստեղծագոր-ծությունների գերակշիռ մասը առաջին անգամ է թարգման-վում տվյալ լեզվով և ներկայացվում ընթերցողին: Չափածո գործերի թարգմանություններին կցված են նաև բնագիր տեքս-տերը: Ժողովածուն նպատակ է հետապնդում խրախուսելու և ուղղորդելու ուսանողների թարգմանչական գործունեությունը դեռևս համալսարանում ուսանելու տարիներին:

ՀՏԴ 82-8
ԳՄԴ 84(4)

ISBN 978-5-8084-2411-1

© ԵՊՀ հրատ., 2019
© Կազմողի համար, 2019

ԱՌԱՋԱԲԱՆ

«Ծաղիկ թարգմանությանց» մատենաշարի այս հատորը նվիրվում է Երևանի պետական համալսարանի հիմնադրման 100-ամյակին: Դեռևս 1919 թ. մայիսի 16-ին Հայաստանի Հանրապետության նախարարների խորհուրդը Երևանում համալսարանի հիմնելու որոշում ընդունեց, իսկ 1920 թ. մեծ շուքով կատարվեց համալսարանի բացման հանդիսավոր արարողությունը: Զուգակցելով բարձրագույն կրթության ոլորտում ազգային և եվրոպական լավագույն ավանդույթները՝ հարյուրամյա իր պատմության ընթացքում Երևանի պետական համալսարանը հսկայական դեր է խաղացել Հայաստանի գիտամշակութային կյանքում: Այդ տարիների ընթացքում համալսարանը պատրաստել է գիտության տարբեր բնագավառների բարձրակարգ մասնագետներ, որոնք ստեղծել են հայ մշակույթի և գիտության կոթողներ, ինչպես նաև իրենց ավանդը ներդրել համաշխարհային քաղաքակրթության զարգացման գործում:

«Ծաղիկ թարգմանությանց» այս ժողովածուն ընդգրկում է իսպաներենից, իտալերենից և պորտուգալերենից հայերեն, ինչպես նաև հայերենից իսպաներեն և իտալերեն թարգմանված մի շարք ստեղծագործություններ, որոնց հիմնական մասը առաջին անգամ է թարգմանվում տվյալ լեզվով:

Ժողովածուն սկսվում է իսպանացի հայտնի գրող, մեծ հումանիստ և հրապարակախոս Գոնսալո Գուարչի «Մի ընտանեկան պատմություն» (ենթավերնագիրը՝ «Պատերազմի արհավիրքները») պատմավեպից ընտրված մի հատվածի թարգմանությամբ, որտեղ ներկայացնելով Իսպանիայի քաղաքացիական պատերազմի ողբերգական դրվագները, անօրինություններն ու անարդարությունները՝ հեղինակը խստորեն դատապարտում է եղբայրասպան պատերազմի արհավիրքները: Հայ ընթերցողն առավելապես ծանոթ է Գոնսալո Գուարչի՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված եռագրությանը, որտեղ

անցյալ դարասկզբի եղերական իրադարձությունները հեղինակը որակում է որպես «հումանիզմի ճգնաժամ», համընդհանուր ողբերգություն: Պատերազմի՝ որպես մարդկության մեծագույն չարիքի թեման արծարծվել է նաև 20-րդ դարի պորտուգալացի հայտնի գրող Միգել Տորգայի «Վերադարձ» պատմվածքում, որը նույնպես առաջին անգամ է պորտուգալերենից թարգմանվում հայերեն:

Իսպաներենից հայերեն կատարված թարգմանությունների բաժնում հայ ընթերցողին են ներկայացվում 19-րդ դարի իսպանացի մեծ գրող, լրագրող և քաղաքական գործիչ Վ. Բլասկո Իբանյեսի «Պատը» պատմվածքի, նույն ժամանակաշրջանի իսպանացի հայտնի գրող, դիվանագետ և քաղաքական գործիչ Խուան Վալերայի «Կրկնակի զոհաբերություն» պատմվածքի, ինչպես նաև 20-րդ դարի իսպանացի հանրաճանաչ գրող, փիլիսոփա և հասարակական գործիչ Միգել դե Ունամունոյի «Մահվան հայելին» պատմվածքի թարգմանությունները:

Հայերենից իսպաներեն կատարված թարգմանությունների բաժնում զետեղվել է մի հատված հայ մեծ գրող Նար-Դոսի «Մպանված աղավնին» վիպակից, ինչպես նաև «Նեղ օրերից մեկը» պատմվածքից: Այս թարգմանությունների շարքում առանձնանում է ժամանակակից հայ բանաստեղծ և արձակագիր, հասարակական գործիչ Վարդգես Պետրոսյանի «Մոր տունը» պատմվածքը, որտեղ հուզիչ մանրամասներով հեղինակը ներկայացնում է, թե ինչպես երկար ժամանակ միայնակ մորը չայցելած քաղաքաբնակ որդին հարազատ գյուղ է գալիս, բայց այդպես էլ չի կարողանում նրան տեսնել, քանի որ գյուղում մոր օգնության և աջակցության կարիքը շատերն են զգում: Իսպանախոս ընթերցողին առաջին անգամ է ներկայացվում նաև Վ. Պետրոսյանի «Ուշացած երջանկություն» հոգեհույզ պատմությունը: Իր շարադրանքի անմիջականությամբ և պարզությամբ, սիրած աղջկա նկատմամբ անթաքույց սիրով է բնութագրվում Վ. Պետրոսյանի «Ինչու են շուտ մեռ-

նում ծաղիկները» պատմվածքը, որը թարգմանվել է իտալերեն: Իտալերեն թարգմանությամբ հայ ընթերցողին է ներկայացվում նաև Ալ. Շիրվանզադեի «Ալինա» պատմվածքը: Չափածո ստեղծագործություններից ընթերցողին են ներկայացվում Ժամանակակից հայ մեծ բանաստեղծ Պարույր Սևակի, 19-րդ դարի իտալացի բանաստեղծ, փիլիսոփա Ջակոմո Լեոպարդիի և 20-րդ դարի իտալացի հայտնի բանաստեղծ Էուջենիո Մոնտալեի բանաստեղծությունների թարգմանությունները:

Իտալերենից հայերեն թարգմանությունների բաժնում ընդգրկվել են Ջովաննի Վերգայի, Նատալիա Գինգրուրգի, Ալբերտո Մորավիայի ստեղծագործությունների թարգմանությունները:

Քանի որ ժողովածուն ներառում է ԵՊՀ ռոմանական բանասիրության ամբիոնի իսպանական և իտալական բաժինների ուսանողների թարգմանությունները, հարկ է նշել, որ սույն թարգմանությունները ժողովածուի մեջ ընդգրկվել են միայն խմբագրական որոշակի աշխատանքներից հետո: Այս առումով կցանկանայինք նաև մեր խորին շնորհակալությունը հայտնել մեր հարգարժան գործընկեր Աննա Մարիա Սեկալին՝ իտալերեն թարգմանությունների կատարելագործմանն աջակցելու համար:

Այսպիսով, ուսումնառության տարիներին ուսանողները հնարավորություն ունեն ոչ միայն ծանոթանալու թարգմանաբանության՝ որպես գիտության հիմնախնդիրներին ու հասկացություններին, այլ նաև նման ժողովածուների հրատարակմամբ գործնականում կիրառելու և զարգացնելու իրենց թարգմանական հմտություններն ու կարողությունները, այսինքն՝ ժողովածուն նպատակ է հետապնդում խրախուսելու և ուղղորդելու ուսանողների թարգմանչական գործունեությունը դեռևս համալսարանում ուսանելու տարիներին:

Հասմիկ Բաղդասարյան

PREFACIO

El presente volumen de la colección «Flor de traducciones» se dedica al centenario de la fundación de la Universidad Estatal de Ereván. El 16 de mayo de 1919 el Consejo de Ministros de la República de Armenia aprobó un decreto sobre la creación de una Universidad en Ereván y en 1920 se inauguró la Universidad con gran solemnidad. Al combinar las mejores tradiciones nacionales y europeas en el ámbito de la educación superior, la Universidad Estatal de Ereván a lo largo de su trayectoria centenaria tuvo un papel importantísimo en el desarrollo de la cultura y ciencia de Armenia. Durante este período la Universidad formó profesionales altamente cualificados y especializados en diferentes ramas de las ciencias los cuales crearon valiosas obras culturales y científicas, así como hicieron una gran aportación en el desarrollo de la civilización universal.

Esta colección de «Flor de traducciones» contiene varias traducciones hechas del español, italiano, portugués al armenio, así como del armenio al español e italiano. La mayor parte de las obras literarias incluidas en el volumen se vierten a la lengua dada por primera vez.

Se abre la colección con la traducción de un fragmento extraído de la narración histórica novelada «Una historia familiar» (subtitulada «Los desastres de la guerra») del célebre escritor español, publicista y gran humanista Gonzalo Guarch. Es una crónica de la Guerra Civil de España donde el autor representa varias escenas trágicas y condena los flagelos de la guerra fratricida. El lector armenio conoce muy bien la trilogía armenia de Gonzalo Guarch consagrada al Genocidio Armenio, en la que el autor califica los trágicos acontecimientos sucedidos a principios del siglo pasado como «crisis de la humanidad», tragedia universal. El tema de la guerra, como la mayor plaga que azota a la humanidad, es patente también en «El regreso» del famoso escritor portugués Miguel Torga. Esta obra también se traduce del portugués al armenio por primera vez.

En la parte consagrada a las traducciones del español al armenio se presentan al lector armenio las traducciones de «La pared» de Blasco Ibáñez, conocido escritor, periodista y político del siglo XIX; «Doble sacrificio», de Juan Valera, famoso escritor, diplomático de la misma época, así como «El espejo de la muerte», del célebre escritor y filósofo Miguel de Unamuno.

La parte dedicada a las traducciones del armenio al español contiene la traducción de un fragmento de «La paloma matada» del célebre escritor armenio Nar-Dos, así como un fragmento de «Uno de los días amargos» del mismo escritor. En esta serie de traducciones destaca también «La casa de la madre», del publicista, prosista y poeta contemporáneo armenio Vardgués Petrosián, donde se cuenta con detalle la historia de un hijo que vive en la ciudad y un día llega a su pueblo natal para ver a su madre a quien no ha visto desde hace mucho, pero no consigue encontrarse con ella porque en el pueblo son muchos los que necesitan su ayuda y apoyo. También por primera vez se presenta al lector hispanohablante la traducción del conmovedor relato «La felicidad retardada», de Vardgués Petrosián. Otra obra del mismo escritor titulada «¡Por qué mueren pronto las flores!» sobresale por la sencillez y espontaneidad de su lenguaje y cuenta la historia de un amor sincero que siente el protagonista por su enamorada. Esta obra se presenta en su versión italiana. También se vierte al italiano el maravilloso cuento «Alina», de A. Shirvanzadé. De las obras poéticas se presentan al lector traducciones de las poesías del célebre poeta armenio P. Sevak, del conocido poeta y filósofo italiano del siglo XIX Giacomo Leopardi, y del famoso poeta italiano del siglo XX Eugenio Montale.

La sección destinada a las traducciones del italiano al armenio incluye también traducciones de las obras de Giovanni Verga, Natalia Ginzburg, Alberto Moravia.

Como la presente colección contiene además traducciones realizadas por alumnos de los Departamentos de Español e Italiano de la Cátedra de Filología Romance, cabe señalar que dichas traducciones se incluyeron en la colección tras revisiones efectuadas por el equipo de redactores. A este respecto, queremos también expresar nuestro más sincero agradecimiento a nuestra colega Anna María Seca por sus valiosas observaciones, destinadas a perfeccionar las traducciones italianas. Así pues, durante su carrera los estudiantes no solo tienen la posibilidad de conocer los conceptos fundamentales y los problemas clave de la traductología como disciplina científica, sino también, gracias a la publicación de semejantes colecciones, tienen la oportunidad de practicar y desarrollar sus habilidades y competencias traductoras; es decir, la presente colección persigue el objetivo de incentivar y guiar las actividades traductoras del alumnado durante sus estudios universitarios.

Hasmik Baghdasaryan

PREFAZIONE

Il presente volume della raccolta “Fior di traduzione” è dedicato al centesimo anniversario della fondazione dell’Università Statale di Yerevan. Il 16 maggio del 1919 il Consiglio dei Ministri della Repubblica d’Armenia decise di fondare l’Università a Yerevan che venne inaugurata nel 1920 con una solenne cerimonia, mettendo insieme la migliore tradizione nazionale ed europea esistente nel campo dell’istruzione superiore. Durante il suo percorso centenario, l’Università Statale di Yerevan ha svolto un ruolo essenziale nella vita culturale e scientifica dell’Armenia. In questi lunghi anni l’Università ha istruito e preparato specialisti di alto livello nei vari campi della scienza che hanno dato vita ad opere di grande pregio artistico e letterario e contribuito a nuove scoperte scientifiche apportando il loro contributo allo sviluppo della conoscenza.

Questa raccolta “Fior di traduzione” comprende opere letterarie che sono state tradotte per la prima volta, oltre che dallo spagnolo, dall’italiano e dal portoghese in armeno, anche dall’armeno in spagnolo e in italiano.

La raccolta si apre con il brano scelto dalla cronaca “Una storia familiare” (sottotitolo: “I disastri della guerra”) dello scrittore, grande umanista e pubblicista spagnolo Gonzalo Guarch. Nell’opera l’autore espone gli episodi tragici della guerra civile di Spagna, le ingiustizie e le atrocità del conflitto e condanna duramente le vicende drammatiche e gli orrori della guerra fratricida. Tra le opere di Gonzalo Guarch il lettore armeno conosce la trilogia dedicata al genocidio degli armeni e le vicende tragiche dell’inizio del secolo scorso che segnarono il popolo armeno e che l’autore definisce “crisi umanitaria” e tragedia universale. Il tema della guerra, come il maggiore male dell’umanità, è trattato anche nel racconto “Ritorno” dello scrittore portoghese del XIX secolo Miguel Torga. Anche questo racconto viene tradotto in armeno per la prima volta.

Nella parte che concerne le traduzioni dallo spagnolo in armeno vengono presentati al lettore armeno il racconto “La parete”, opera di un illustre scrittore, giornalista e politico del XIX secolo V. Blasco

Ibáñez, e il racconto “Doppio sacrificio” di un altro famoso scrittore, diplomatico e politico spagnolo dello stesso periodo Juan Valera. È inserita anche la traduzione del racconto del grande scrittore, filosofo e politico del XX secolo Miguel de Unamuno “Lo specchio della morte”.

Nella parte delle traduzioni dall’armeno in spagnolo sono inclusi brani del romanzo “La colomba uccisa” e il racconto “Uno dei giorni amari” dello scrittore Nar-Dos. Tra le traduzioni più significative una particolare citazione merita il racconto “La casa della madre” del narratore contemporaneo, intellettuale di grande impegno politico e civile Vardges Petrosyan. Nel racconto l’autore narra in modo scrupoloso e commovente la storia del figlio che vive in città e torna nel paese natale dopo un lungo periodo di assenza per fare una visita alla madre che non riesce nemmeno a vedere poiché nel paese molti necessitano dell’assistenza e del sostegno di lei. Al lettore ispanofono, per la prima volta, viene offerto anche un altro racconto commovente di Vardges Petrosyan intitolato “Felicità ritardata”, una storia che si caratterizza per la sua spontaneità e semplicità, per l’amore inesausto e sincero nei confronti della propria amata. Sempre dello stesso autore è presente, tradotto in italiano, il racconto “Perché muoiono presto i fiori”. Per la prima volta sarà accessibile al lettore armeno il racconto “Alina” del famoso scrittore A. Shirvanzade tradotto in italiano. Tra le opere poetiche sono rappresentate ai lettori le traduzioni delle poesie del grande scrittore armeno moderno P. Sevak e del famoso poeta italiano del XX secolo Eugenio Montale.

Nel libro inoltre sono riportate, tradotte dall’italiano in lingua armena, le opere di Giovanni Verga, Natalia Ginzburg e Alberto Moravia.

Poiché la raccolta comprende numerose traduzioni eseguite dagli studenti delle sezioni di spagnolo e di italiano della Cattedra di Filologia Romanza dell’Università Statale di Yerevan, è doveroso rimarcare che la redazione di queste ultime sono state inserite nella raccolta solo dopo una scrupolosa ed attenta elaborazione. A tal riguardo, vorremmo esprimere il nostro ringraziamento alla nostra

gentile collega Anna Maria Seca, per il sostegno offerto nella revisione delle traduzioni italiane. Così, durante il loro percorso universitario, gli studenti non solo hanno avuto la possibilità di conoscere le nozioni e le problematiche inerenti la traduttologia come disciplina scientifica, ma hanno anche potuto riflettere sugli aspetti tecnici riguardanti la pubblicazione delle stesse raccolte, con lo specifico proposito di mettere in pratica e di avere l'opportunità di sviluppare le proprie capacità e abilità traduttive. In ultima analisi, siamo convinti del fatto che la presente raccolta abbia il precipuo scopo di incoraggiare e di indirizzare gli studenti ad affrontare l'impegnativo esercizio della traduzione anche nel periodo di frequenza dell'Università.

Hasmik Baghdasaryan

**TRADUCCIONES DEL
ESPAÑOL AL ARMENIO
Y DEL
ARMENIO AL ESPAÑOL**



**ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԻՍՊԱՆԵՐԵՆԻՑ ՀԱՅԵՐԵՆ
ԵՎ
ՀԱՅԵՐԵՆԻՑ ԻՍՊԱՆԵՐԵՆ**

Գոնսալո Գուարչ
Gonzalo Guarch

Գ. Գուարչը իսպանացի հայտնի գրող է, հրապարակախոս և ճարտարապետ: Նա հեղինակ է մի շարք գրական-գեղարվեստական ստեղծագործությունների, որոնցում արտահայտում է իր վրդովմունքն ու ընդվզումը մարդկության դեմ կատարվող ոճիրների՝ ցեղասպանությունների, պատերազմների, բռնությունների դեմ: Հայ ընթերցողն առավելապես ծանոթ է Գոնսալո Գուարչի Հայոց ցեղասպանության մասին պատմող Եռագրությանը: Հայոց ցեղասպանության ճանաչման գործում ներդրած նշանակալից ավանդի համար նրան շնորհվել է ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում: Ստորև ներկայացվում է մի հատված Գ. Գուարչի «Մի ընտանեկան պատմություն» («Պատերազմի արհավիրքները») պատմավեպից, որտեղ հեղինակը ներկայացնում է Իսպանիայի քաղաքացիական պատերազմի (1936-1939 թթ.) որոշ ողբերգական դրվագներ:

1931 թ.
ԱՊՐԻԼ – ՄԱՅԻՍ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1931 թ. ապրիլի 14-ին Կամիլո Ռիվերայի տասնհինգամյակն էր: Նրա նվերը լինելու էր Կարոլինա Ռուիսի պատրաստած խնձորով կարկանդակը. նա միակն էր, որ իրեն հիշելու էր: Կամիլոյի ընտանիքի մյուս անդամների համար այդ օրը նախորդների պես անցնելու էր աննկատ:

Դոն Կոսմե Ռիվերոն այլ մտահոգություններ ուներ: Առավոտվա մամուլը հայտնում էր, որ ընտրողների մեծամասնու-

թյունը ապրիլի տասներկուսին, կիրակի օրը, առավոտյան քվեարկել էր Հանրապետության օգտին՝ դրանով իսկ վերջ դնելով Խակայի և օրեր անց Կուատրո Վիենտոսի¹ ապստամբությանը հաջորդած երկարատև բախումներին և խռովություններին, որոնք Միապետության համար դարձել էին իսկական գլխացավանք:

Նախորդ օրը՝ ապրիլի 13-ին, մեծ քաղաքների փողոցները վերածվել էին իսկական հանրահավաքատեղերի՝ լի մարդկանց հոծ բազմությամբ, որոնք իրենց գոյուններով աջակցում էին Հանրապետությանը, կարծես թե դա իրենց վերջին հույսը լիներ: Նույնիսկ քաղաքացիական գվարդիան կրակ արձակեց ցուցարարների այն խմբերի վրա, որոնք Մադրիդի Սիբելես հրապարակի մոտ խախտում էին հասարակական կարգը:

Այդ էր պատճառը, որ այն երեքշաբթի օրը՝ ամսի 14-ին, դոն Կոսմե Ռիվերոն տարակուսանքի մեջ էր: Համոզված էր, որ դա ծանր հետևանքներ էր ունենալու. միգուցե արդեն որոշ բաների մասին մտորելու ժամանակն էր:

Երեկոն իջնելուն պես այդ ամենը հաստատվեց: Սևիլայում տոն էր... հանրապետական տոն, ինչպես երկրի մյուս կարևոր քաղաքներում: Այդ պատճառով, երբ վերադարձավ տուն, և դոնյա Լուլան նրան ասաց՝ «Գիտե՞ս, որ այսօր Կամիլիտոյի ծնունդն է», նա մոայլ և տհաճ դեմքով նայեց կնոջը: Իսկ իրեն ի՞նչ: Մի թե դա կարևոր էր իր համար: Միայն կարողացավ պատասխանել.

– Լո՛ւա, հանգի՛ստ թող ինձ, ես այլ մտահոգություններ ունեմ: Բավական է այդ հիմարություններով ինձ անհանգրստացնես: Իսկ դու գիտե՞ս, թե այսօր ինչ է պատահել:

Լուլա Լեյվա ի Գասկոնը գլխով բացասական նշան արեց: Ո՛չ, գաղափար չուներ: Ի՞նչ էր պատահել:

¹ Խոսքը Հանրապետության հռչակման համար տեղի ունեցած Կուատրո Վիենտոս օդանավակայանի ապստամբության մասին է, որ տեղի էր ունեցել 1930 թ. դեկտեմբերի 15-ին՝ Խակայի ձախողված ապստամբությունից 3 օր անց:

Դոն Կոսմեն այնքան էլ համբերություն չուներ, կարելի է ասել, որ ընդհանրապես չուներ. նա ակնդետ նայեց կնոջը և բացականչեց.

– Թեկուզ չհավատաս, բայց այսօրվա սկսած փոթորիկը մեզ բոլորիս իր հետ կտանի:

Հետո նա փակվեց իր աշխատասենյակում, որպեսզի փորձի լսել ռադիոյով հեռարձակվող լուրերը, որ այդ պահին իրեն հետաքրքրող միակ բանն էին:

Դոն Կոսմեն կարողացավ լսել, թե ինչպես է բազմությունը բացականչություններով ողջունում ժամանակավոր կառավարության անդամներին, մինչդեռ սոցիալիստ և հանրապետական խորհրդականները զավթում էին Մադրիդի քաղաքապետարանը: Ժամը ութին նախարարները մտան կառավարություն, իսկ փողոցներում պայթյունավտանգ, խառը իրավիճակ էր:

Քիչ ավելի ուշ սկսեց իսկապես անհանգստանալ: Ռադիոկայանից հաղորդում էին, որ Ալֆոնսո XIII-ը լքում է պալատը, որպեսզի գնա Կարթագեն: Ի՛նչ է լինելու երկրի վիճակը: Ի՛նչ դժբախտություն:

Այդ մասին իմացավ մի քանի օր անց, երբ Սիբկուլո Մերկանտիլում² կարդաց «Հանրապետության թերթը»: Ժամանակավոր կառավարությունը կարճ ժամկետում կազմավորելու էր խորհրդարան, որը կազմված էր լինելու քաղաքական լայն շրջանակներից՝ Ալկալա Մամորա, Մաուրա, Կասարես Կիրոգա, Լարգո Կաբալյերո, արհմիության ներկայացուցիչը, արմատականներ Լեռոն և Մարտինես Բառիոն: Այդ անձնավորությունը նրան ընդհանրապես դուր չէր գալիս: Պրիետո դե լոս Ռիոսը, որը միշտ ընդդիմացել էր Պրիմո դե Ռիվերային: Դա՛ էր կառավարությունը: Ինչպիսի՛ բարբարոսություն:

Դոն Կոսմեն սարսափահար էր. այդ կառավարությունը մտադիր էր քանդել ոչ թե միապետության պես արմատացած

² Սոցիալ-մշակութային լայն գործառույթներ իրականացնող կենտրոն Սևիլայում, որը հիմնադրվել է 1868 թվականին:

մի կառույց, այլ նրա էությունը՝ սոցիալական ռեֆորմի պատրվակով, և իսպառ վերացնել սոցիալական անարդարությունը: Ո՛չ, նրան ընդհանրապես դուր չէր գալիս այն ամենը, ինչ տեղի էր ունենում:

Բայց միգուցե ավելի օգտակար կլինե՞ր շարունակել խոսել Ռիվերոյի ընտանիքի մասին: Վերջիվերջո նրանք են այս պատմության գլխավոր հերոսները:

Կամիլոն մեծանում էր իր եղբայրների ստվերում: Ստիպված էին նրան մի քանի անգամ վիրահատել: Գոնե խոսել կարողանար: Բայց ինչ վերաբերում է մնացածին, ապա դա անլուծելի էր: Դառը իրականությունն ահավոր էր. նա մի տան թզուկ էր, որին պետք չէր տանից դուրս հանել: Ինչի՞ համար...: Որ ծիծաղեի՞ն նրա վրա: Մարդիկ դաժան էին և այդ պահը բաց չէին թողնի: «Մի սրա՛ն նայեք: Այս փոքրին: Ի՛նչ գվարճալի է»: Եվ այդ ժամանակ դոն Կոսմեի սիրտը կարծես տակնուվրա էր լինում: Ո՛չ: Ավելի լավ էր նրան այդպես թողնել: Տանը որևէ մեկը կփորձեր սովորեցնել կարդալ, խիստ կարևոր բաները գրել, հաշվել և մի քիչ էլ ավելին: Մասնագետները նրանց ասել էին, որ նմանատիպ էակները երկար չեն ապրում, որ ավելի լավ կլինե՞ր նրանց հետ չկապվել: Դե, դոն Կոսմեի համար դա պարզ էր, և նա գրեթե բառ չէր փոխանակում տղայի հետ: Իսկ ի՞նչ պետք է ասե՞ր նրան՝ «Կա՛մ, ո՛չ դա»: Իսկ դոնյա Լուան նրա հետ վարվում էր այնպես, ասես խաղալիք լինե՞ր, որը հավատարիմ շան պես սևեռուն հայացքով միշտ իրեն էր նայում: «Դա ո՛չ, Կա՛մ, դա ո՛չ: Ա՛յ քեզ երեխա»:

Ինչ վերաբերում է եղբայրներին, ապա նրանք մի կերպ էին նրան հանդուրժում: Նույնիսկ, կարելի է ասել, նրան սիրում էին այնպես, ինչպես կսիրեին, օրինակ՝ մի տնային կենդանու: Նա այնքա՛ն անպաշտպան էր, այնքա՛ն լավը, չնայած, որ ավագ եղբայրը՝ Պաբլոն, չէր ցանկանում անգամ լսել նրա մասին, քանի որ հոգու խորքում ամաչում էր նրա համար: Երբ իր ընկերներին, իսկ ավելի ուշ որևէ մի ընկերուհու բերում էր

տուն, փորձում էր թաքցնել նրան այնպես, ինչպես ընտանիքի ամոթալի գաղտնիքներն են թաքցնում: Նրա լավագույն ընկերը՝ Լուիս Վալ դե Օտունան, որը նույնպես Սարագոսայում ակադեմիա էր հաճախել իր հետ, մի օր նրան շատ պարզ ասաց.

– Գերմանիայում մարդիկ նմանատիպ խնդիրներ չեն ուզում ունենալ, այնտեղ դա այլ կերպ են լուծում... պարզապես ազատվում են նրանցից:

Առաջին անգամ, երբ Պաբլոն լսեց այդ տեսությունը, կատաղած պատասխանեց նրան: «Իմ եղբա յրբ, ո՛չ: Բացառվում է»: Բայց դա նրան մտածմունքների մեջ գցեց. «Գուցե այդ կերպ չի տառապի ու չի տանջվի: Օ՛ֆ: Անհնար է: Մայրս կուշաթափվի: Ո՛չ, ո՛չ, նման բան անհնար է, ... համենայն դեպս հիմա»:

Միակ մարդը, որը նրան ընդունում էր, Լեոնսիոն էր: Իրականում հենց ինքն էր սովորեցրել առաջին տառերը: Զարմացավ, երբ համոզվեց, որ նա վատ չէր անում դա: Սակայն հրաժարվում էր գրել:

– Ինչու՞ չես գրում,– պնդում էր նա: – Լսի՛ր, գոնե ամեն օր մի տող:

– Այո՛,– պատասխանեց Կամիլոն: Գրել գիտեր, բայց ներկա պահին դրա կարիքը չկար:

– Այդպես չես մոռանա ոչինչ, կգրառես և ընդմիշտ կմնան:

Կամիլոն լուռ ձեռքը տարավ գլխին: Ամեն ինչ այնտեղ էր մնում ընդմիշտ, բայց ինչու՞ ասեր այդ մասին: Չէին հավատա, որ ամեն ինչ, բացարձակապես ամեն ինչ, մտապահում էր իր գլխում՝ սկսած առաջին վայրկյանից, երբ բացեց աչքերը: «Տե՛ր Աստված, ի՛նչ ափսոս»: Այդ ժամանակ չկարողացավ հասկանալ այդ հնչյունների իմաստը, միայն ամիսներ անց հասկացավ, որ իրեն էին վերաբերում: Ափսոս, իսկապես, շատ ափսոս:

Բայց շատ արագ կարդալ սովորեց: Այն էլ ինչպե՛ս սովորեց: Լեոնսիոն միակն էր եղբայրներից, որ գիտեր նրա գաղտնիքը: Նա նույնպես գաղտնիք ուներ: Խորապես սիրահարված էր Պաբլոյի ընկերոջը՝ Լուիս դել Վալին, և ամառային մի երեկո լացակումած բացատրեց այդ ամենը Կամիլոյին: Դա ան-

հնարին սեր էր:

Կամիլոն կարողացավ հասկանալ նրան, քանի որ լավ էր հասկանում՝ ինչ ասել է անհնարին սեր: Ընտանիքում, քիչ թե շատ, նրան հանդուրժում էին բոլորը, բայց Լեոնսիոյից բացի ոչ ոք նրան չէր սիրում, անգամ իր մայրը, որ շարունակ հանդիմանում էր իրեն: «Մթերային խանութում ինձ մայրիկ մի՛ անվանիր: Ո՛չ էլ փողոցում, տա՛նը, միա՛յն տանը: Եվ ցածրա՛ձա՛յն: Քանի՞ անգամ պետք է քեզ կրկնեմ դա»:

Կամիլոն, որն իր արժանապատվությունն ուներ, որոշեց, որ այլևս երբեք: Եվ այդ ժամանակվանից ի վեր, եթե մարդ էր լինում, նա թաքնվում էր իր սենյակում: Այն հազվադեպ դեպքերում, երբ նրան հանում էին փողոց, չորս կամ հինգ քայլով հետ էր ընկնում: Փոքր ժամանակվանից Ռոսիտան, քրիստոնեական գթասրտությունից դրդված, նրան զբոսանքի էր տանում, քանի դեռ չէր հանդիպել իր նորաթուխ փեսացուին՝ Ռիկարդո Սանմիլյանին, Սանտիագո Սանմիլյանի՝ ոստիկանապետի որդուն: Նա նույնպես սովորում էր իրավաբանական ֆակուլտետում, և դասից հետո իր գեղեցիկ ձեռագրով արված գրառումներն աղջնակը վարպետորեն Ռիկարդոյին էր փոխանցում, իսկ վերջինս էլ աղջկան հրավիրում էր կինոթատրոն: Նրան համբուրում էր այնպես, ինչպես էկրանից էին դա անում, հետո ձեռքը տանում էր նրա վերնագգեստի տակ, և մինչ Ռոսիտան ակնդետ նայում էր էկրանին, փնտրում էր նրա կրծքերը: Իրար հավիտենական սեր էին խոստանում, չնայած այն հանգամանքին, որ երբ որդին տուն էր վերադառնում, ոստիկանապետը բղավում էր նրա վրա և անպիտան անվանում:

– Անպետքի մեկն ես: Տե՛ս, նորից չմնաս իրավաբանության հինգերորդ կուրսում: Ամո՜թ է:

Ռիկարդոն նրան նայում էր ու չէր լսում՝ հիշելով իր մեղմ հպումը Ռոսիտայի հագուստի տակ քողարկված մաշկին, այդ փոքրիկ գոգավորություններին: Օ՛, ի՛նչ հաճելի էր, և մտադրվում էր հաջորդ չորեքշաբթի նրան կրկին տանել կինոթատրոն: Ամենահամապատասխան վայրն էր՝ մուլօ, հարմար,

գաղտնի, իսկ Էկրանի կախարդանքն ամեն ինչ թույլ էր տալիս: Այդ ժամանակ ուսումը նրան քիչ էր հետաքրքրում. իրականում ուզում էր մի գործ դնել՝ գիշերային մի բար՝ համոզված լինելով, որ դա իրեն շատ փող կբերեր:

– Դա սանձարձակությունն է,– բղավում էր հունից դուրս եկած ուստիկանապետը, որն իմացել էր եղելությունը: – Սանձարձակությունն: Թափթփուկներին բնորոշ վարքագիծ: Ես գիտեմ, թե ինչ եմ ասում: Այս երեխան դժբախտ է լինելու: Ինձ հաստատ նման չէ:

Եվ դա ճիշտ էր, ընդհանրապես իրար նման չէին, կարծես թե իրականում իրար հետ որևէ կապ չունենային, չնայած ծննդյան վկայականը փաստում էր, որ հայր և որդի են:

– Ուրեմն այդ դեպքում ո՞ր գրողի տարածին է նման այս երեխան:

– Իմ եղբորը,– արձագանքում էր դոնյա Կարմենը՝ նրա կինը:

– Խոսկիինի՞ն: Դե վերջացրո՛ւ: Նա անառակի մեկն է, նրա ոտքն այլևս այստեղ չտեսնեմ: Այ կի՛ն, ես ուստիկանապետ եմ, չե՞ս հասկանում, ինչի՞նչ ես ուզում հասնել: Ուզում ես ինձ ամբողջ Սևիլայի ծաղրի առարկա՞ն դարձնել: Էլ ոչ մի խոսք:

Ոչ ոք չէր կարող նրա գլխից հանել այն միտքը, որ Ռիկարդիտոն իր քեռու կենդանի պատկերն էր: Ի՛նչ անբախտություն:

Կարծես՝ դա քիչ էր, հիմա էլ նրան բռնացրեց Բակունինի գիրքը կարդալիս, ոչ ավել, ոչ պակաս, քան Բակունին: Սաստիկ դառնացավ: Ամբողջ կյանքում ավագակներին ինքն է խոզանոց ուղարկել, իսկ հիմա այդ պատիժը: Ինչի՞նչ էր ուզում հասնել դրանով: Վե՞րջ տար իր կարիերային:

Երբ արդեն համբերության բաժակը լցվեց, փակվեց նրա հետ իր աշխատասենյակում և մի լավ ծեծեց: Այլ ճար չունեիր: Նրան բազմիցս էր ծեծել, բայց այս անգամ գոտիով էր, բռունցքներով և աքացիներով:

– Դա հնարավո՞ր բան է: Ի՞նձ: Ինձ հե՞տ վարվել այսպես:

Կատաղությունից փրփրել էր: Երկար տարիներ էր, ինչ

նրան այդպես չէր ծեծել:

Բաժանմունքում շատ անգամ սահմանափակվում էր՝ մատնանշելով այս կամ այն մարդուն, կանչել էր տալիս իր հավատարիմ մարդկանց և բարձրացնում մի մատը, հետո երկրորդը, երրորդը, չորրորդը, ավեր կամ երկու ձեռքը:

– Թող Աստված տեսնի, թե ինչպես է խոստովանում, դո՛ւն Սանտիագո: Տա՛ւր: Տեսնենք՝ հո հուսախաբ չե՛նք լինի:

– Այո՛, տա՛ւր, տա՛ւր: Ժամանակ առ ժամանակ պետք է մի լավ դաս տալ այս անիծյալներին:

Չնայած նա հազվադեպ էր դա անձամբ անում: Երբեմն, երբ սեփական հետաքրքրությունից դրդված, իր համար խնդիր չէր անձամբ սկսելն այդ «գործ» կոչվածը, ինչպես ինքն էր այդպես անվանում:

Որդուն ծեծելուց հետո այնքան էր քրտնել, որ ստիպված եղավ լվացվել: «Նա դրան արժանի էր: Բակունի՛ն: Այդ անիծյալի վերջը վատ է լինելու, չափազանց վատ: Տեսնենք՝ ուշքի կգա՞»: Կուշտ էր ամեն ինչից:

Կինը, տեսնելով, թե երեխային ինչ օրն է գցել, նրան խիստ անպատվեց.

– Իսկական շան ծնունդ ես:

Ինչպե՞ս հանդուրժեք, որ իր սեփական տանն իրեն հայիոյնին: Ձեռքի հակառակ կողմով նրան ուժգին հարվածեց, և Կարմենի շրթունքից արյուն սկսեց հոսել, ասես նրան սպանած լինեք: Ի՛նչ դժբախտություն: Ինչպիսի՛ ընտանիք: Գնաց բաժանմունք՝ դուռը ուժեղ փակելով. համենայն դեպս այնտեղ միշտ էլ որևէ կիսատ մնացած գործ լինում էր:

Այդ օրը ներսում պատահաբար մի քանի արհմիության ներկայացուցիչներ կային: Երբ եկավ, պահակակետի սերժանտին ասաց, որ իրեն չխանգարեն, աշխատասենյակից վերցրեց ցլամարտիկի մտրակը և իջավ նկուղ, որտեղ բանտախցերն էին: Ներսում երկուսն էին և փորձեցին դիմադրել: Դա դիմադրություն էր իշխանության դեմ, և նա ցույց տվեց նրանց իրենց տեղը.

– Բակունի՛ն, Բակունի՛ն, – բղավում էր շնչակտուր, մինչ

մտրակով հարվածում էր նրանց:

– Ի՞նչ Բակունին, մենք ոչինչ չենք հասկանում: Մենք անարխիստ չենք:

Նա միայն հիշում էր Կարմենի շրթունքը՝ համոզված, որ աշխարհին իր դեմ է դուրս եկել:

– Ստացե՛ք, անիծյալնե՛ր, սրիկանե՛ր:

Ռիկարդո Սանմիլյանը այդ ժամանակ կյանքից շատ հիասթափված և զզված էր: Երբ ուշքի եկավ, բերանում զգաց արյան համ և թթեց իր կոտրված ատամը գուգարանակոնքի մեջ: Ատում էր հորը, մտածեց, որ եթե նա համարձակվի կրկին իր վրա ձեռք բարձրացնել, կվերցնի բյուրոյի ատրճանակը և կկրակի նրա վրա: Գրողի տարածը փոքրուց միշտ նրան դաժանորեն էր ծեծել: Բայց այդ ծե՛ծը: Ամբողջ մարմինը կապտուկներով էր պատված, և մինչև իսկ հոգին էր ցավում: Մտածեց, որ չի կարող շարունակել այնտեղ ապրել, կգնա տանից: Նրան կրկին տեսնել չէր հանդուրժի, չնայած պետք է զգույշ լիներ, քանի որ գիտեր, որ այդ մարդը, երբ ցանկանար, կարող էր իր առջև դուրս գալ: Մինչ պատրաստում էր փոքրիկ ճամպրուկը, մտածում էր, որ լավագույն լուծումը Մադրիդ գնալն է: Իսկ Ռոսիտա՞ն: Հետո, ավելի ուշ կգար նրա հետևից:

Կամիլոն իմացավ այդ մասին, քանի որ Լեոնսիոն, որն այդպիսին էր, նրան ամեն ինչ պատմեց: Ռոսիտան միայն Լեոնսիոյի հետ էր նման բաներից խոսում, նրա մեջ տեսնում էր մեկին, ում կարելի էր վստահել, մեկին, ով զգացմունքներ ուներ և իրեն կհասկանար, այն աստիճան, որ նկատեց, թե ինչպես է լաց լինում այդ մասին տեղեկանալուց հետո:

Իրականում Կամիլոն դժվարորեն էր արտասվում, քանի որ նրա արցունքագեղձերը լավ չէին գործում, բայց դեմքի մի շարժումով աչքերը կիսափակում էր, իսկ հետո դրանք ծածկում ձեռքերով. նա մորից էր սովորել այդպես անել:

Կամիլոյին չէին ծեծում, դե, գուցե ժամանակ առ ժամանակ՝ մի ապտակ: Մի անգամ՝ Սուրբ ծննդյան օրը, կամ դոն Կոսմեի օրը, երբ նրա ձեռքից շատ տաք ապուրով լի ափսե թե

բաժակ ընկավ և փշուր-փշուր եղավ, դոն Կոսմեն բարձրացրեց սպառնացող ձեռքը, իսկ դոնյա Լուլան թեպետ աչքերով սկսեց հանդիմանել նրան, սակայն փորձեց նաև պաշտպանել:

– Բայց, Կո՛սմե, նա էլ է մարդ, Աստծո տված հոգի ունի:

Իսկ դոն Կոսմեն հագիվ էր իրեն զսպում՝ տեսնելով գորգի վրա թափված վերմիշելը: Նա մտածում էր, որ իր կինը բնավ էլ իրավացի չէ, որ այդ հրեշը չի կարող հոգի ունենալ: Նրա պես մարդու ինչի՞ն էր պետք հոգին:

Իսիդորոն էլ Կամիլոյի հետ լավ հարաբերություններ չունեի, դե, իրականում ոչ մեկի հետ նա լավ չէր, անգամ իր մոր հետ, որը նրա մասին խոսելիս ասում էր. «Այդ անպիտան Իսիդորոն» և ավելացնում. «Չգիտեմ՝ ինչ ենք անելու այս երեխայի հետ»: Իրականում Իսիդորոն զգվել էր ամեն ինչից, հոգնել էր իր մոր գգրոցի դարակները փորփրելուց, որպեսզի նրանից գողանար չորս պեսետա, հոգնել էր արծաթե շերեփ գրավ դնելուց, դոնյա Լուիսա Սամպերի՝ հարևանուհու տուն մտնելուց, որը գրեթե ամբողջությամբ կույր էր, որ տեսներ, թե ինչ կարող էր տանել: Այնտեղ շարունակում էր մնալ՝ զուտ հարմարավետությունից ելնելով, ամեն գիշեր երազելով Բարսելոն, իսկ հետո՝ գուցե Փարիզ գնալու մասին՝ գիտակցելով, որ չի կարող մնալ Սևիլայում և հանդուրժել իր հոր կոիվները, մոր հանդիմանական հայացքները և այն ճնշող մթնոլորտը, որը նրան ոչինչ անել թույլ չէր տալիս, մինչդեռ ինքը երազում էր ազատության մասին:

Համբերության բաժակը լցվեց այն օրը, երբ նրան ինստիտուտից հեռացրեցին: Չգիտես ինչու՝ դոնյա Լուլան կարծեց, որ անհանգիստ և չափից ավելի ըմբոստ լինելու պատճառով էր, սակայն հոգու խորքում ոսկե սիրտ ուներ: Հայրն այլ կերպ էր տեսնում իրականությունը:

– Իսկ հիմա ի՞նչ: Ի՞նչ պետք է անենք քեզ հետ: Ի՛նչ դժբախտություն: Ի՛նչ դժբախտություն:

Այնուամենայնիվ, դոն Կոսմեն չէր համարձակվում նրա հետ գլուխ դնել, քանի որ վերջին անգամ տղան, որը նրանից մի գլուխ բարձր էր, դեմքը պարզել էր, բայց երբ ծեծել էր նրան,

բռնացնելով պաշտպանվել էր:

– Դու՛րս գնա, դու՛րս, չեմ ուզում այլևս քեզ տեսնել,– բացականչել էր այդ ժամանակ զայրացած հայրը: – Դու՛րս այստեղից, անշնորհակալ, վատ տղա:

Այդ անսպասելի պոռթկումն առանձնապես ոչինչ չէր նշանակում, քանի որ դոնյա Լոլան, ինչպես միշտ, իր կամքն էր պարտադրում: «Նրա որդի՛ն է: Խելագարվե՛լ է, ի՞նչ է: Միայն թե ոչ դա»,– հուզված գոռում էր նա և ծակող հայացքով նայում ամուսնուն, և այլևս չանդրադարձան այդ թեմային, նույնիսկ միմյանց հետ չքննարկեցին: Միայն ժամանակ առ ժամանակ թերահավատ հայացքներ փոխանակեցին, իսկ դոն Կոսմեն աչքի պոչով նայեց այդ անպետք Կայենին ու մտածեց, որ ամեն ինչ պարզ էր իր համար, իր ժառանգությունից ոչ մի գրոշ չէր պատրաստվում թողնել նրան: Սեփական հոր վրա ձեռք բարձրացնելը ամենամեծ սրբապղծությունն է:

Դոն Կոսմեն խոսեց իր խոստովանահոր՝ ծխական քահանա դոն Խայմե Ռիվադավիայի հետ, որը նրանց ճանաչում էր իր ողջ կյանքի ընթացքում և շատ լավ գիտեր նրանցից յուրաքանչյուրին:

– Համբերությո՛ւն, որդի՛ս: Աստված մեզ շատ ծանր փորձություններ է ուղարկում, երբեմն՝ անտանելի: Վերջերս խոսեցի դոն Անխել Հեռերայի հետ, և այդ արտասովոր մարդն ինձ ասաց, որ այս երկիրը Ողբերգական շաբաթից³ հետո ուշքի չի գալիս: Բայց տե՛ս, այդ ժամանակից ի վեր ինչքան ջրեր են հոսել: Թող Աստված ինձ ների, բայց այս ամենը Հանրապետության բացարձակ թողտվության պատճառով է: Այս սողուկիչ մասոններն ամենուր են: Այսպիսին է ստեղծված իրավիճակը: Ինձ չի զարմացնում Իսիդորոյի պահվածքը: Ամենայն հարգանքով, բայց նա արձակած փամփուշտի պես կորած է: Աղոթե՛ք Ձեր որդու համար, այլևս ոչ մի հարգանք չի մնացել,

³ Խոսքը Բարսելոնում 1909 թվականին տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների մասին է:

ոչ մի: Շուտով մոլեռանդությունից, սնահավատությունից և անհավատությունից բացի ոչինչ չի մնա: Աստված մի արասցե, որ երեխան ընկնի այդ սոցիալիստների ձեռքը:

Դոն Կոսմեն քախոս էր, առանձնապես ասելիք էլ չկար, այնպես որ նա դուրս եկավ եկեղեցուց՝ ծանր հառաչելով և խորհելով իր կնոջ մասին, որից ամենաշատն էր վախենում, քանի որ բազմիցս փորձել էր ատամները ցույց տալ. մի բան, որ ինքը տանել չէր կարողանում: Գոնե մի փոքր կայունություն նրան պետք էր, միայն դա, ոչ մի վայրկյան չէր կասկածում դոն Խայմեի բառերի ճշմարտացիությանը: Չարիքն ազատության մեջ էր և իր սև գործն անում էր, իսկ այն պահից ի վեր, ինչ թագավորն ստիպված եղավ հեռանալ երկրից, ամեն ինչ ավելի էր վատթարանում: Ի՛նչ ամոթ: Միայն այն մտքից, թե ինչ կարող էր պատահել, նա սաստիկ անհանգստանում էր, որովհետև տեսնում էր, թե ինչպես է շուրջն ամեն ինչ քանդվում: Ի՛նչ լավ էին ապրում առաջ: Փոփոխությունների վախը նրա մոտ գլխապտույտ էր առաջացնում: Ոչինչ պետք չէր փոխել, ոչինչ: Ամեն ինչից վեր կարգն էր, և պետք չէր խախտել այն:

Բելեն Ռիվերոն այդպես չէր մտածում, և չնայած ընդամենը մի քանի շաբաթ էր մնացել, որ բոլորեր իր քսան տարին, ծնողները շարունակ իր հետ երեխայի պես էին վարվում: Մեկ ամիս Մադրիդում հյուրընկալվել էր մորաքույր Ռոսալիայի տանը և այդ ժամանակվանից հետո կարծում էր, թե լավ գիտեր իր հետագա անելիքները: Առաջին հերթին մտադիր էր Սևիլյայից մայրաքաղաք գնալ, ճանաչել մի ուրիշ աշխարհ, որն իրեն թույլ կտար ազատորեն շնչել, քանի որ, ըստ էության, այդ քաղաքն իր համար ոչ այլ ինչ էր, քան մի մեծ գյուղ, և նա այլևս չէր կարողանում ապրել այնտեղ, դրան գումարած իրենց տանը տիրող փակ և բռնապետական մթնոլորտը: Երագում էր ազատության մասին, որի շունչը վերջապես կկարողանար զգալ Մադրիդում:

Սակայն դոն Կոսմեն չէր ցանկանում ո՛չ խոսել, ո՛չ էլ լսել այդ ամենի մասին, ըստ էության նա միշտ մեջբերում էր այն պատմությունը, որտեղ ասվում էր, որ կինն իր կոտորած ոտքով միշտ պետք է տանը նստի: Բախվելով նրա համառությանը՝ հայրը մի օր պոռթկաց: Ի՞նչ էր նշանակում սեռերի հավասարության մասին այդ ողջ պատմությունը: Ստիպված էր լրջորեն սպառնալ նրան, քանի որ մարմնով սարսուռ էր անցնում, երբ մտածում էր, որ այդ ամենը նրան կարող էր անդառնալիորեն կործանել: Ավելի շուտ նրան կսպաններ, ինչպես իր բարեկամ Կառլոս Մարտինեսն արեց: Մեծ աղմուկ բարձրացավ, շատ տհաճ իրավիճակ ստեղծվեց, մի տարի անդադար սուգ արեցին, ապա բոլորը հանգստացան՝ հասկանալով, որ մարդն արել էր այն, ինչ պետք է աներ: Թե չէ էլ ու ր մնաց ընտանիքի պատիվը, որտեղ, չար լեզուների և բամբասանքի հորձանուտով: Ո՛չ, երբեք, երբեք. նա նույն կերպ կվարվեր: Նա դա շատ պարզ հասկացրեց կնոջը. «Ավելի շուտ կսպանեմ նրան»: Լոլա Լեյվա դե Ռիվերոն անմխիթար լաց եղավ՝ գիտակցելով, որ ամուսնու ասածները լոկ խոսքեր չէին:

Ռոմանը՝ իրենց կրտսեր և սիրելի զավակը, Կամիլոյին չհաշված, ուներ իր ուրույն աշխարհը և այս պատմության մեջ տեղ չունեւ, միակն էր, որ կարող էր առանց պատճառի և արդարանալու ընթրիքից ուշանալ: Սկզբում դոն Կոսմեն նրան խիստ հանդիմանեց՝ ասելով, որ իր չափը ճանաչի: Ժամը ինն անց կեսին տա՛նը լինեւ, սակայն տղան որևէ բանականության կոչի ուշադրություն չէր դարձնում, մինչև որ մի օր նա հայտնվեց քաղաքում *Acción Católica*⁴-ի ներկայացուցչի հետ: Նրանք երեքով փակվել էին աշխատասենյակում, և ուշագրավ էր, որ երբ դոն Կոսմեն ներս մտավ՝ կասկածներով լի և վախվորած, այնտեղից դուրս եկավ համոզված: Այնպես չէր, որ այդ ամենը նրա սրտով էր, սակայն ներկայացուցիչը, որ չափազանց շաղակրատ էր, նրան պարզ հասկացրեց, որ դա էր ճիշտ

⁴ Acción Católica-ն Ավետարանի քարոզչության ձև է:

ուղին: Այնուհետև աստիճանաբար, ժամանակին համընթաց, ընտանիքը լուռ համակերպվեց այդ ամենի հետ: Ռոմանը տարբերվում էր մյուսներից, և բոլորի մոտ այն կարծիքն էր ստեղծվել, որ հայրը ոչինչ չէր պատրաստվում անել դա փոխելու համար: Եթե գալիս էր ժամանակին ընթերելու, լավ, իսկ եթե ոչ, ապա ընթրում էին առանց նրա՝ պահելով իր բաժին կերակուրը խոհանոցում:

– Ի՞նչ է, այս երեխան արտոնյալ է,– մի օր նեղացած հարցրեց դոնյա Լուլան:

Դոն Կոսմեն թոթվեց ուսերը և առանց պատասխանելու շարունակեց ծամելը: Հոգու խորքում համաձայն էր, որովհետև ինչ որ մեկը պետք է վերջապես կանգնեցներ մարքսիստներին:

Իրոք, դոն Կոսմեն հիանում էր իր որդի Ռոմանով և կարծում էր, որ գոնե այդ տղան հստակ գաղափարների տեր է և հասկացել է, թե որտեղից կարելի է սպասել վտանգը: Նա լավ տղա էր, հավատամքով խորապես կաթոլիկ էր:

– Շատ հաճելի է լսել դա,– շնջաց դոն Խայմեն խոստովանարանի մութ անկյունից մինչև երկար-բարակ ասում էր, թե ինչպես էր Աստված ընտրում իր պաշտպաններին, և կասկած չկար, որ շատ դժվարին ժամանակներ էին գալու, և կաթոլիկ ընտանիքներն ու եկեղեցին պետք է մի բռնուցք դառնան: Դոն Խայմեն շատ կապված էր այդ երեխաներին. չէ՞ որ նա էր կնքել նրանց բոլորին, մեծացել էին իր աչքի առաջ, և հիմա վախենում էր նրանցից յուրաքանչյուրի համար:

– Այնտեղ, հենց այնտեղ՝ փողոցի մյուս կողմում էին գտնվում սատանաներն իրենց սպասավորների հետ,– ասաց դոն Կոսմեն, այլապես չէին համարձակվի իրեն բացիկ ուղարկել, որի մեջ Հանրապետությունը հանդես էր գալիս կիսամերկ կնոջ կերպարով՝ կուրծքը բաց, եռագույն դրոշով փաթաթված և մասունական եռանկյամբ:

Ինչպիսի՜ անամոթություն. թագավորը, որն այդչա՛փ կաթոլիկ էր և այդքա՛ն իսպանացի, ստիպված էր հեռանալ իր իսկ երկրից՝ որպես մի փախստական: Տականքնե՛ր: Մի քանի

սրիկա հաստատ երկիրը հասցնելու էին կործանման: Ալկալա Սամորան (բայց չէ՞ որ նրան լավ էր ճանաչում) մի, այսպես ասած, ինքնավստահ փաստաբան էր Պրիեգոյից, ոչ ավելին: Նա կարող էր բարձրաձայն ասել այդ մասին, որովհետև երբ եկել էր թեմ, նրա հետ երկարատև շփում էր ունեցել: Շատ խելացի անձնավորություն էր, դա անհերքելի էր, սակայն միևնույն ժամանակ սխալ, լիովին սխալ մտածելակերպ ուներ, և այդ ամենին գումարած՝ նաև աթեիստ էր:

Ինչի՞ համար էր այդքան ազատությունը, մի՞թե երկիրը քառսի վերածելու համար:

– Դո՛ն Նիսետո, Դուք սխալվում եք: Նա կգնար այդ մարդու մոտ, որպեսզի երեսին ասեր այն, ինչ մտածում էր, բայց արդեն ուշ էր, այնտեղ միակ մարդը, որն այդ ամենից օգուտ էր քաղել, նույն ինքը Բառաբասն էր. վերջինս իրեն շատ բավարարված էր զգալու այդ քառսում: Իսկ իր կառավարության այն նախարարի՝ հավատափոխների ժառանգորդ դոն Միգել Մաուրայի մասին խոսելն ավելորդ էր, ո՛վ Սուրբ Կույս, ասես Կարլ Մարքսը լիներ. կարմիր կոլն իր կաշին չի փոխում: Եվ իրենց հերթին էլ հրեաները, որոնք երկար ժամանակ հավակնում էին ոչնչացնել այդքան կաթոլիկ իսպանական պետության հիմքերը: Ի՛նչ ամոթ... կամ էլ թե չէ ծագումով անդալուզցի այն Լեռուն, ինչպե՞ս էին նրան կոչում, օ՛, այո՛, «գուգահեռության կայսր»: Իր խորին համոզմամբ այդ անձնավորությունը դատապարտվելու էր:

«Սատանայի մեկը»,– խորհրդածում էր դոն Խայմեն, մինչ արագ քայլում էր դեպի ավանդատուն և սարսափած մտաբերում նրա անագործայն խոսքերը. *«Մեր օրերի համարձակ էրիտասարդներ, վերացրե՛ք այս տարաբախտ երկրի խեղճ ու խախուտ քաղաքակրթությունը, քանդե՛ք նրա տաճարները և վե՛րջ տվե՛ք նրա աստվածներին փառաբանելը, հանե՛ք կուսակրոն ձեռնադրված աղջիկների քողերը, մայրացրե՛ք նրանց, որպեսզի արու զավակներով ցեղը բազմացնեն»:*

Ո՛վ Սուրբ Կույս: Սատանան գլուխ է բարձրացրել: Կամ էլ

այն մյուս դավաճան սևիլյացի Դիեգո Մարտինես Բառիոն, իսկական արմատական մասոնի մեկն է, որի միակ նպատակը եկեղեցու հիմքերը քանդելն էր: Ի՛նչ դժբախտություն: Իսկ սոցիալիզմում դարանակալած մարքսիստ Ֆերնանդո դե լոս Ռիոսը, իսկ Կասարես Կիրոզան և Ալվարո դե Ալբորնոսը, կամ էլ Մարսելինո Դոմինգոն: Ինչպիսի՜ ողբալի երկիր, և ի հավելումն այդ ամենի, դոն Մանուել Ազանյան՝ մի անտանելի և մեծամիտ մարդ, որն աստում էր եկեղեցին: Ոչ ոք չէր կարող ասել, որ նրանց դեմ չարացած է, բայց այդ ավգուստինականները կրթելու ունակ չէին:

Ինչպիսի՜ ցավալի կառավարություն՝ պաշտպանության նախարարը արվամոլ: Այսպես ու՛ր ենք հասնելու: Այդ պարզամիտն ու՛ր, բանակն ու՛ր, դա նույնն էր ինչ աղվեսին հավաբունը գցելը: Ինչպիսի՜ խառնաշփոթ երկիր, ի՛նչ ափսոս:

Դոն Խայմեն համոզված էր, որ այդ ամենը լավ չէր ավարտվելու. նա ողջ պատարագը մատուցելու ընթացքում, տերողորմյան ասելիս և առավոտյան ժամերգության ժամանակ ջերմեռանդորեն աղոթում էր կառավարության տապալման համար: Ուրիշ ինչ՞ կարող էր անել. տեսնել, թե ինչպե՞ս է մասոնների, սոցիալիստների և հակակղերականների ձեռքին իր աշխարհը փուլ գալիս, մինչ ինքը ձեռքերը ծալած նստե՞լ էր: Այնտեղ էին նաև թագավորին արտաքսողները՝ Ինդալեսիո Պրիետոն և Լարգո Կաբալյերոն. նրանք սոցիալիզմի ողնուծուծն էին, իսկ հիմա դարձել էին ֆինանսների և աշխատանքի նախարարներ: Ինչպիսի՜ բարբարոսություն:

Դոնյա Լուլան այդ ամենն արել էր Կարոլինայի՝ խոհարարի միջոցով, որպեսզի չմոռանար գնալ, քանի որ հինգշաբթի էր. այդ օրը կաթոլիկ կանայք հավաքվելու էին և մի որոշ ժամանակ հիացմունքով իրեն էին լսելու: Հետո այդ ամենին հաջորդելու էր շոկոլադը՝ թխվածքաբլիթներով:

«Այդ հրաշալի կանանց հետ որոշակի ժամանակահատված միասին անցկացնելու առաջարկը ուղղակի անկարող էր

մերժել», – մտածեց դոն Խայմեն: Հոտ քաշեց փարաջայի թևքից. այն պահից ի վեր, ինչ իր բարեհոգի Ֆուենսանտան ստիպված եղավ հիվանդանոցում պառկել, ի դեպ իր շնորհիվ, ոչ ոք չէր զբաղվում իր տնով: Ի՞նչ էր անելու: Փարաջայից փչում էր մեղրամոմի, խունկի, քրտինքի, փոշու և այլ հոտեր: Բոլորս էլ մարդ արարածներ ենք, անհրաժեշտ էր գտնել մեկին, ով նրան կփոխարիներ, այլապես իր տունը այդպես էլ գլխիվայր շուռ կգար: Վրան օծանելիք կցաներ: Մտածում էր, որ արդեն գուցե նոր փարաջա և նոր թիկնոց պատվիրելու ժամանակն էր: Հարցը փողը չէր, քանի որ ավելի քան տասնհինգ հազար պեսետա խնայողություն ուներ: Միակ բանը, որ նրան խիստ պակասում էր, ժամանակն էր, և ի լրումն այդ ամենի՝ մահացող Ֆուենսանտան՝ իրեն դնելով անհարմար վիճակի մեջ: Պետք է գնար նրան տեսակցելու, մինչ նա կհայտնվեր անմխիթար վիճակում, և երևի թե նրա համար գտներ ջանասեր մի զարմուհու, նրանցից, որ աչքաբաց են ամեն գործում:

Հենց դռան մոտ՝ նրա դիմաց, դուրս եկավ Պաբլո Ռիվերոն՝ համազգեստով: Փշաքաղվեց.

– Ինչպիսի՜ անակնկալ, ա՛յ տղա, ի՛նչ հաճելի անակնկալ, որքա՛ն ուրախ եմ քեզ տեսնելու համար:

– Արձակու՞րդ ես եկել:– Այո, տե՛ր հայր,– Պաբլոն համբուրեց նրա ձեռքը,– տեսնում եք ևս մեկ ամիս և արդեն՝ կրտսեր լեյտենանտ:

– Այո, տղա՛ս, սարսափելի է, թե որքան արագ է թռչում ժամանակը: Այսքան կարճ ժամանակահատվածում սպա ես: Մեզ պետք է, որ քեզ նմանները մեզ պաշտպանեն, եթե ո՛չ, ապա ի՞նչ:

– Ոչի՛նչ, տե՛ր հայր, ոչինչ չի պատահի, կտեսնեք, շուտով ջրերն իրենց հունով կհոսեն, ընդամենը չորս մասոն և չորս մարքսիստ են, որոնք իրենցից ոչինչ չեն ներկայացնում: Դրանց արմատները խորն են, բայց դա մեկ-երկու օրվա հարց է: Ոչի՛նչ, ոչի՛նչ, սա էլ կանցնի, ինչպես ամառային մի ամպրոպ:

Պաբլո Ռիվերոն քաջ գիտակցում էր, թե ինչ էր ասում՝ համոզված լինելով, որ այդ ամենը շուտով վերջանալու էր, միայն

հարկավոր էր մի փոքր համբերություն ունենալ: Ակադեմիայում ազատ խոսում էին, թե ինչ էր լինելու, և եթե այդ կառավարությունը ցանկանում էր տնական լինել, պետք է շատ բաներ փոխեր՝ առաջին հերթին պաշտպանության նախարարին: Մինչ նրանք երկար զրոսնում էին, կապիտան Ռուիսը բացահայտ խոստովանել էր և բացատրեց նրան, որ պատրաստվում էին Անկախ միապետականների ակումբ հիմնել: Դեռ հարմար պահ կլիներ, և կխոսեին նրա հետ այդ մասին:

– Ե՛րբ, – բաժանվելիս բացականչել էր նա:

– Շուտո՞վ, շա՛տ շուտով, Ռիվե՛րո:

Այդ վստահությունից նա հպարտությամբ լցվեց՝ խորհրդածելով, որ իրեն դեռ չէին նշանակել, բայց արդեն մատնանշում էին: Դե, իհա՛րկե, կանդամագրվեր: Նա շատ հավատարիմ էր թագավորին: Վերջինս պետք է հնարավորինս շուտ վերադառնար, քանի որ միայն ինքը՝ միապետն էր ի գործու կարգ ու կանոն հաստատելու և երկիրը դուրս բերելու այդ ահավոր թոհուրոհից:

Դուռը բացեց դոնյա Լուան, որն անկեղծ ու պարզ ուրախության մի հիստերիկ ճիչ արձակեց, մինչ հուզված գրկում էր իր առաջնեկին:

Բայց ի՞նչ էր նա անում այդտեղ: Ինչպիսի՛ անակնկալ:

– Տեսա՞ք, դո՛ն Խայմե, հենց երեկ էր՝ պատարագի ժամանակ, աղաչում էի Աստծուն, որպեսզի բոլորդ այստեղ միասին լինեիք: Եվ տեսե՛ք, տե՛ր հայր, ահա նա այստեղ է: Որքա՛ն գեղեցիկ էս, Պա՛բլո: Ի դեպ, ներսում Կարմելա Օսթորնեն է, արդեն գիտես՝ Կարմելինայի մայրն է, այսինքն՝ մի պահ անցի՛ր և ողջունի՛ր նրան: Իսկ դուք, դոն Խայմե, մտե՛ք, նե՛րս մտեք: Աստծու սիրուն, մի՛ կանգնեք դռների արանքում, շոկոլադը կսառչի, մեզ մի քանի բառ ասեք, և կգնանք մի թեթև բան ուտելու: Իսկ դու՛, Պա՛բլո, գնա՛ հորդ տեսնելու, նա հավանաբար այն փոքրիկ դեղին սրահում թերթ է կարդում, եթե իհարկե արթնացել է հետճաշա քնից: Ինչպիսի՛ անակնկալ: Ի՛նչ ուրախություն:

Դոն Խայմեն դռան միջից օրհնության մի նշան արեց նրանց:

Որքա՛ն հաճելի էր իրեն զգում այդ միջավայրում: Որքա՛ն համեղ էր դոնյա Լուայի շոկոլադը: Քրիստոնյա ընտանիքից վեր ոչինչ չկա:

– Ի՛մ դուստրեր, հիմա ուրախանալու ժամը չէ, լավ գիտեք, որ եկեղեցին տառապում է: Հիշե՛ք, թե ինչ ասաց մեր սիրելի թեմի առաջնորդը, երեկվա մամուլում գրված է. *«Երբ Հիսուս Քրիստոսի թագավորության թշնամիները վճռականորեն առաջ են գնում, ոչ մի կաթոլիկ անգործության մատնվելու իրավունք չունի»*: Այդ մարդը սուրբ է և բացի այդ՝ մեր սիրելի երկրի եկեղեցու առաջնորդը: Նա վստահում է ձեզ՝ Իսպանիայի մայրերիդ. այնպես որ այդ աթեիստ Ազանյան պետք է կուլ տա իր բառերը: Իսպանիան երբեք չի դադարի կաթոլիկ լինել: Երբե՛ք, երբե՛ք: Պետք է ներշնչեք ձեր որդիներին այն գեղեցիկը, ինչ կրում եք ձեր մեջ:

Դոն Խայմեն հազիվ հինգ րոպե խոսեց: Բանն այն չէր, որ նրան շոկոլադը դուր չէր գալիս, պարզապես հարմար պահը չէր դասախոսություն կարդալու համար, մի երկու բառն էլ բավական էր:

Այնուհետև նրանք մտքեր փոխանակեցին, ամեն ինչից մի քիչ խոսեցին, անգամ տեղական նորություններից, որոնք լոկ շշուկներ չէին, այլ իրերն իրենց անունով կոչել : «Ինչպե՛ս, Կարմեն Ալվարադոն հղիացել էր: Այն էլ առանց ամուսնանալու՞»: Նրանք զարմացած միմյանց նայեցին՝ փորձելով մտածել, թե ո՞վ կլինեն երեխայի հայրը: Դոն Խայմեն մի կուլ շոկոլադ ըմպեց և քաղցր-մեղր ժպտալով՝ ակնոցի վրայից ակնոդետ նայեց նրանց: Ի՛նչ միամիտն էին, սատանան ազատության մեջ էր, և հեշտ չէր լինելու նրան նորից փարախում փակել:

*Gonzalo Guarch «Una historia familiar» (Los desastres de la guerra),
Capítulo 2. Abril - Mayo 1931. La República, págs. 24-38.*

*Թարգմանությունը՝ Էլիզա Մինասյանի և Մազա Բարայեյանի
(ԵՊՀ, ռուսական բանասիրության ամբիոնի դասախոսներ)*

Վիսենտե Բլասկո Իբանյես
Vicente Blasco Ibáñez

Վ. Բլասկո Իբանյես (1898-1907 թթ.)՝ իսպանացի գրող, լրագրող և քաղաքական գործիչ: Մոտ հիսուն վեպերի, մի շարք պատմվածքների հեղինակ է, որոնք տարբերվում են իրենց բնույթով՝ սոցիալական, հոգեբանական, արկածային, պատերազմական և այլն: Նրա ստեղծագործությունները պատկանում են նատուրալիզմի գրական ուղղությանը:

ՊԱՏԸ

Ամեն անգամ, երբ քեռի Ռաբոսայի թոռները հանդիպում էին Կասպոռայի այրու զավակների հետ դաշտի արահետներում կամ Կամպանարի փողոցներում, ամբողջ հարևանությունը քննարկում էր տեղի ունեցածը: Ինչպե՞ս իրար նայեցին: Տարբեր ժեստերով միմյանց վիրավորեցին... Սա վատ ավարտ է ունենալու, և մի անսպասելի օր գյուղի գլխին նոր փորձանք են բերելու:

Գյուղապետը գյուղի ամենաազդեցիկ մարդկանց հետ խաղաղություն էր քարոզում երկու թշնամի ընտանիքների կռվարար ու ջլապինդ երիտասարդներին, իսկ քահանան՝ աստվածանվեր մի ծերուկ, գնում էր մի տնից մյուսը՝ խորհուրդ տալով մոռանալ անցյալի բոլոր վիրավորանքները:

Երեսուն տարի էր, ինչ Ռաբոսաների և Կասպոռաների ընտանիքների միջև ասելությունը տարբեր անհանգստություններ էր պատճառում Կամպանարի բնակիչներին: Համարյա թե Վալենսիայի մերձակայքում ծվարած այս խաղաղ գյուղում, որը գետի այն ափից նայում էր քաղաքին իր սրածայր զանգակատան կլոր պատուհանիկներով, այս բարբարոսները մավրերին հատուկ քինախնդրությամբ կրկնում էին միջնադարյան իտալական հայտնի ընտանիքների պայքարի ու ոճրագործությունների պատմությունը: Նախկինում լավ ընկերներ էին եղել, իսկ նրանց տները, չնայած գտնվում էին

տարբեր փողոցներում, բակերը սահմանակից էին և բաժանվում էին միայն ցածր հողաշեն պատով: Մի գիշեր ոռոգման հարցի պատճառով Կասպոռաների ընտանիքից մեկը այգում հրացանի մի կրակոցով գետնին տապալեց քեռի Ռաբոսայի որդիներից մեկին, իսկ վերջինիս կրտսեր որդին որպեսզի ցույց տար, որ ընտանիքում դեռ տղամարդիկ են մնացել, մեկ ամիս դարանակալելուց հետո կարողացավ մարդասպանի ուղիղ ճակատին գնդակ արձակել: Այդ ժամանակվանից սկսած երկու ընտանիքներն ապրում էին միմյանց սպանելու համար՝ ավելի շատ մտածելով հարևանի անփութությունից օգտվելու, քան թե հողերի մշակման մասին: Օրը ցերեկով փողոցի մեջտեղում հրացանազարկեր կամ էլ կրակոցներ, որոնք փայլատակում էին մութն ընկնելուն պես ոռոգման ջրանցքի խորքից, թավ եղեգնուտից կամ էլ բլրի հետևից, երբ ռիսերիմ թշնամին վերադառնում էր դաշտից: Եվ մե՛կ Ռաբոսաների ընտանիքից մեկը, մե՛կ Կասպոռաների ընտանիքից մյուսը, մի մեծ բաժին արձիճ կուլ տված, տեղ էին գտնում գերեզմանոցում. վրեժի ծարավը չէր մարում, ընդհակառակը, ամեն մի նոր սերնդի հետ ավելի ուժեղ էր բորբոքվում, քանզի թվում էր, թե երկու ընտանիքներում մոր արգանդից դուրս գալուց հետո փոքրիկները ձեռքը մեկնում էին հրացանին՝ հարևանին սպանելու մտադրությամբ:

Երեսուն տարվա ընդհարումներից հետո Կասպոռաների ընտանիքում մնացել էր այրին՝ իր երեք երիտասարդ և ջլապիհո որդիների հետ: Մյուս տանը ութսունամյա քեռի Ռաբոսան էր՝ ծղոտե բազկաթոռին անշարժ գամված, ոտքերը կաթվածահար, ինչպես վրեժխնդրության կնճռոտ մի կուռք, որի առջև երկու թոռները երդում էին տվել պաշտպանել ընտանիքի պատիվը:

Բայց ժամանակները փոխվել էին, և արդեն անհնար էր կիրականօրյա պատարագից հետո փոխհրաձգություն սկսել եկեղեցու հրապարակում, ինչպես երբեմն անում էին նրանց հայրերը: Ժանդարմներն իրենց տեսադաշտից նրանց բաց

չէին թողնում, հարևանները հետևում էին նրանց, և բավական էր, որ նրանցից մեկը մի պահ կանգ առներ արահետում կամ տան մի անկյունում, իսկույններ իսկ հայտնվում էին հարևանները և հորդորում չվիճել: Հոգնած այս անդադար իսկողությունից, որը վերածվում էր հետապնդման և դարձել էր անհաղթահարելի մի խոչընդոտ, Կասպոռաների ու Ռաբոսաների ընտանիքների անդամներն այլևս չէին ձգտում հանդիպել, անգամ խուսափում էին միմյանցից, երբ պատահաբար դեմ առ դեմ էին դուրս գալիս:

Այնքան մեծ էր միմյանցից մեկուսանալու և իրար չտեսնելու ցանկությունը, որ նրանց բակերը իրարից բաժանող հողաշեն պատն արդեն շատ ցածր էր թվում: Հավերք ցախի կապոցի վրա էին բարձրանում և հարազատի պես նստում ցանկապատի ամենավերևի հատվածում, մինչդեռ նրանց տան կանայք պատուհանից միմյանց վրա արհամարհական հայացքներ էին նետում: Դրանից հնարավոր չէր խուսափել. այն արդեն ընտանեկան սովորույթ էր, որի պատճառով Կասպոռայի այրին որդիներին ստիպեց պատը մոտ մի մետրի չափ բարձրացնել: Հարևանները շտապեցին իրենց արհամարհանքը արտահայտել քարերով և կրաքարերով, և շուտով պատը էլ ավելի վեր խոյացավ: Եվ այսպես, ատելության այս խուլ և անընդմեջ դրսևորումներով պատը բարձրանում էր և բարձրանում: Պատուհաններն արդեն չէին երևում, իսկ հետո նաև տանիքները: Բակի խեղճ թռչունները դողդողում էին հսկա պատի մոայլ ստվերում, որը նրանցից թաքցրել էր երկնքի մի մասը: Պատից այն կողմ հնչող նրանց կշկշոցները տխուր էին և ընկճված. պատն ատելության մի հուշարձան էր, որը կարծես շարված լինեք գոհերի ոսկորներից և արյունից:

Այսպես էր անցնում ժամանակը երկու ընտանիքների համար, որոնք միմյանց վրա նախկինի պես չէին հարձակվում և ոչ էլ հաշտության եզրեր փնտրում՝ անշարժացած և քարացած իրենց ատելությամբ:

Մի օր գյուղի զանգակատունը տազնապ ազդարարեց: Քենի Ռաբոսայի տունը կրակի բոցերի մեջ այրվում էր: Թոռները դաշտում էին, նրանցից մեկի կինը լվացքատանն էր, իսկ տան դռների և պատուհանների արանքներից այրված ծղոտի խիտ ծուխ էր դուրս գալիս: Ներսում՝ այդ դժոխքում, որտեղ կրակի բոցերը մոնչյունով տարածվում էին, մնացել էր խեղճ քեռի Ռաբոսան՝ անշարժ գամված իր աթոռին: Թոռնուհին մազերն էր փետում՝ ինքն իրեն մեղադրելով անզգուշության համար, փողոցում մարդիկ էին հավաքվել՝ սարսափած կրակի ուժգնությունից: Նրանցից ամենաքաջերը դուռը բացեցին, բայց խիտ ծուխը և կրակի կայծերը, որոնք փողոց հասան, ստիպեցին նրանց ետ կանգնել:

– Պապի՛ կը, խե՛ղճ պապիկը,– գոչում էր Ռաբոսաների ընտանիքի թոռնուհին՝ հայացքով իզուր փրկիչ փնտրելով:

Վախեցած հարևանները զարմանքից քարացել էին, կարծես թե հենց զանգակատունն էր շարժվել նրանց ուղղությամբ: Երեք երիտասարդ տղաներ վազելով մտան այրվող տուն: Կասպողաների ընտանիքի որդիներն էին: Նրանք պարզապես հայացքներ փոխանակեցին և առանց մի բառ ասելու սալամանդրի պես նետվեցին ուժգնացող կրակի մեջ: Ամբոխը նրանց դիմավորեց ոգևորության գոչուններով, երբ նրանք կրկին հայտնվեցին՝ տնից դուրս հանելով սրբի պես վեր բարձրացրած քեռի Ռաբոսային՝ իր ծղոտյա աթոռի մեջ անշարժացած: Գետնին դրեցին ծերուկին և, առանց նրա վրա մի հայացք նետելու, կրկին ներս վազեցին:

– Ո՛չ, ո՛չ,– բղավում էր ամբոխը:

Բայց նրանք միայն ժպտացին և ներս մտան: Մտադիր էին փրկել իրենց թշնամիների ունեցվածքից որոշ իրեր: Եթե քեռի Ռաբոսայի թոռները այստեղ լինեին, բնականաբար տնից էլ դուրս չէին գա: Բայց խոսքը մի խեղճուկրակ ծերուկի մասին էր, որին պաշտպանելը տղամարդու պատվի խնդիր էր: Մարդիկ տեսնում էին, թե ինչ արագ էին նրանք փողոցից տուն անցնում և տնից փողոց, նետվում ծխի մեջ՝ անհանգիստ դնե-

րի պէս իրենց վրայից թափ տալով կրակի կայծերը, մի կողմ դնում կահույքն ու պարկերը, որպէսզի նորից նետվեին կրակի մեջ:

Հանկարծ ամբոխը մի ճիչ արձակեց, երբ տեսավ, թէ ինչպէս էին ավագ եղբայրները թների մեջ առած դուրս բերում փոքր եղբորը: Մի գերան ընկել և կոտորել էր նրա ոտքը:

– Շտա՛ պ, մի աթոռ:

Մարդիկ շտապեցին ծեր Ռաբոսայի ծղոտե աթոռը տակից դուրս քաշել, որ վիրավորին նստեցնեն: Տղան, վառված մազերով և մրոտ դեմքով, ժպտում էր՝ թաքցնելով այն սուր ցավերը, որից դրդված ամուր սեղմում էր շրթունքները: Զգաց, որ ինչոր մեկի դողդոջուն, չորացած ու կոշտացած ձեռքերը սեղմում էին իր ձեռքերը:

– Որո՞յա՛կ իմ, որո՞յա՛կ իմ, – հառաչում էր քեռի Ռաբոսան, որը սողալով մոտենում էր նրան:

Եվ մինչ երիտասարդը կարող էր ինչ-որ բան անել, հաշմանդամն իր անատամ և խորը բերանով սկսեց անթիվ-անհամար համբուրել նրա ձեռքերը՝ դրանք թրջելով իր արցունքներով:

Ամբողջ տունն այրվեց: Եվ երբ կանչեցին որմնադիրներին նորը կառուցելու համար, քեռի Ռաբոսայի թոռները թույլ չտվեցին, որ գործը սկսեն սկսացած աղբով ծածկված հողատարածքի մաքրմամբ: Առաջին հերթին ավելի կարևոր գործ ունեին անելու՝ քանդել չարաբաստիկ պատը: Եվ, քլունգը ձեռքներն առնելով, հենց իրենք հասցրեցին առաջին հարվածները:

*Թարգմանությունը՝ Մոնա Մխիթարյանի
(«Իսպաներեն լեզու և գրականություն» բաժնի մագիստրոս)*

Խուան Վալերա (1824-1905 թթ.)՝ իսպանացի հայտնի գրող, դիվանագետ և քաղաքական գործիչ։ Մի շարք գրական ստեղծագործությունների՝ նովելների, պատմվածքների, թատերական պիեսների հեղինակ է, որոնք առանձնանում են ոճական բազմազանությամբ։ Նրա ամենահայտնի ստեղծագործություններից է «Պեպիտա Խիմենես» վեպը, որի հիման վրա կոմպոզիտոր Ի. Ալբենիզը ստեղծել է համանուն օպերան։

ԿՐԿՆԱԿԻ ԻՆՔՆԱԶՈՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՐ ԳՈՒՏԻԵՌԵՍԻՑ ԴՈՆ ՊԵՊԻՏՈՅԻՆ

Մալագա, ապրիլի 4, 1842 թ.

Ի՛մ սիրելի սան,

Իմ քույրը, որ ավելի քան քսան տարի բնակվել է այդ շրջանում, այրիանալուց հետո, չունենալով զավակներ, արդեն երկու տարի է, ինչ ապրում է իմ տանը։ Շատերի հետ կապ է պահպանել, հաճախ այդտեղից նամակներ է ստանում և տեղյակ է ամբողջ անցուդարձին։ Նրանից որոշ տեղեկություններ եմ ստացել, որոնք ինձ անչափ անհանգստացնում են և վհատեցնում։ Ինքս ինձ հարցնում եմ, թե ինչպե՞ս է հնարավոր, որ այդքան ազնիվ և աստվածավախ երիտասարդը, որին ես այդքան լավ դասավանդել եմ մետաֆիզիկա ու բարոյականություն, երբ նա ճեմարան էր հաճախում իմ դասախոսությունները լսելու, հիմա մեղսավոր վարքագիծ է դրսևորում։ Մարսափում եմ մտածել, որ քեզ վտանգում ես՝ գործելու ամենասարսափելի մեղքերը՝ դառնացնելով մեծապատիվ ծերունու կյանքը, անպատվելով նրա ալեհեր մագերը և առիթ դառնալով, եթե ոչ պատճառ, անդարմանելի դժբախտությունների։ Գիտեմ, որ խենթի պես սիրահարված ես դոնյա Խուանային՝

հարուստ կալվածատեր դոն Գրեգորիոյի օրինական կնոջը, նրան հետապնդում եւ ամբարտաւան անխոհեմությամբ և ձգտում հաղթել նրա առաքինությանն ու հաստատակամությանը, որոնցով նա քեզ դիմադրում է: Ձևացնում եւ, թե ճարտարագետ եւ կամ հմուտ գյուղատնտես, որն այդտեղ գինի պատրաստել և լավագույն խաղողի որթեր պատվաստել է սովորեցնում, բայց իրականում այն, ինչ անում եւ, անառակ մի չարաձգիւթություն է, և այն, ինչ պատրաստում եւ, մի հարգարժան տղամարդու ամոթալի մեկուսացումն է, որի միակ մեղքն արդեն ծեր հասակում երիտասարդ և երբեմն մի փոքր սեթեւեթող կնոջ հետ ամուսնանալն է: Օ՛, ո՛չ, որդի՛ս: Աղաչում եմ քեզ, Աստծո՛ սիրուն և հանուն քո բարօրության: Հրաժարվի՛ր քո նենգ նախաձեռնություններից և վերադարձի՛ր Մալագա: Եթե գոնե մի քիչ գնահատում եւ քո նկատմամբ միշտ ունեցած իմ հարգանքն ու լավ կարծիքը և չեւ ուզում կորցնել դրանք, չանտեսե՛ս իմ նախատիքները:

ԴՈՆ ՊԵՊԻՏՈՅԻՑ ՀԱՅՐ ԳՈՒՏԻՆԵՌԵՍԻՆ

Վիլյալեգրե, ապրիլի 7

Ի՛մ սիրելի և հարգարժան ուսուցիչ,

Քեռի Պակոն, որն այստեղից գինի և ձիթապտուղ է տանում այդ քաղաք, քիչ առաջ ինձ հանձնեց ամսի 4-ի Ձեր նամակը, որին շտապում եմ պատասխանել, որպեսզի Դուք հանգիստ լինեք և իմ մասին լավ կարծիք կազմեք: Ես սիրահարված չեմ դոնյա Խուանային և ոչ էլ հետապնդում եմ նրան, ինչպես նա է երևակայում: Պիտի խոստովանեմ, որ դոնյա Խուանան յուրահատուկ և որոշ չափով վտանգավոր կլին է: Արդեն երևի վեց տարի է, ինչ նա երեսունին մոտ հասակում հաջողացրեց ամուսնանալ հարուստ կալվածատեր դոն Գրեգորիոյի հետ: Նրան ոչ մեկը անհավատարմության մեջ չի մեղադրում, բայց նա հիմարեցնում է իր ամուսնուն, նրան իր կրնկի տակ է պահում և ամբողջ օրն այս կողմ, այն կողմ է վազեց-

նում: Նա այնքան մեծամիտ և սնափառ է, որ կարծում է, ինչպես նաև հավատացրել է իր ամուսնուն, որ չկա մի տղամարդ, որ իրեն սիրահարված չլինի ու չհետապնդի: Եթե ճիշտն ասեմ, դոնյա Խուանան տգեղ չէ, բայց ոչ էլ շատ գեղեցիկ է և ո՛չ բարձրահասակ, ո՛չ էլ ցածրահասակ, ինչպես նաև ո՛չ շատ նիհար, ո՛չ գեր լինելով՝ ոչ մեկի ուշադրությունը չի գրավում: Այո՛, ուշադրություն է գրավում իր հայացքներով, շարժումներով, անգամ եթե գլխի չի ընկնում, ջանում է ուշադրություն գրավել և մարդկանց բացահայտորեն հրահրել: Այտերին կարմրաներկ է քսում, ճակատին և պարանոցին՝ բրնձե դիմափռոչի, թարթիչներն էլ ներկում է սև գույնով, որպեսզի իր սև աչքերն ավելի ուժեղ փայլեն: Աչքերն անդադար թարթում է, կարծես այդտեղից արձակվում են սիրով թունավորված նետերը: Այսպիսով, դոնյա Խուանան, որի մասին չար լեզուները ոչինչ չեն կարող ասել, առանց որևէ մեկին գրավելու ակնհայտ մտադրության, մե՛կ զբոսնելիս, մե՛կ երեկոյթներին և մե՛կ էլ անգամ եկեղեցում համբերությունից հանում ու խելքահան է անում ուժեղ սեռի մահկանացուներին: Ահա թե ինչպես հեշտ և մեծաքանակ նվաճումներ է ունենում: Եվ քիչ չեն այն տղամարդիկ, հատկապես եթե օտարերկրացիներ են ու նրան չեն ճանաչում, որոնք պատկերացնում են, թե ինչ են ուզում, թեթև հույսեր են տածում ու համարձակվում սիրահետել և անգամ ոչ այդքան բարոյական առաջարկություններ անել: Այդ ժամանակ նա բարկացած նրանց գրողի ծոցն է ուղարկում: Եվ միանգամից բոլոր ընկերուհիների մոտ գլուխ գովելով ավստասնք հայտնում, թե ինչ չափի է հասել անբարոյականությունը, թե որքան դժբախտ է ինքը և միևնույն ժամանակ այնպիսի հմայքի տեր, որ չկա մի տղամարդ, որ իրեն չսիրահետի, չհավակնի, չհետապնդի, ոտնձգություններ չկատարի իր պարկեշտության հանդեպ՝ հանգիստ չթողնելով իրեն իր դոն Գրեգորիոյի հետ:

Դոնյա Խուանան այնքան է խենթացել, որ իրեն թվում է,

թե անգամ նրանք, ովքեր ոչինչ չեն ասում, սիրահարված են իրեն: Դժբախտաբար, այդ ցանկի մեջ մտնում եմ նաև ես: Անցած ամառ Կառատրակայի առողջարանում հանդիպեցի և ծանոթացա դոնյա Խուանայի հետ: Եվ քանի որ հիմա այստեղ եմ, նա զինվել է այն մտքով, որ եկել եմ նրան հետապնդելու: Չգիտեմ՝ ինչպես նրա պատրանքները ցրեմ, որոնք ինձ արդեն մի քիչ ձանձրացնում են, և ոչ էլ ուզում եմ կամ կարող եմ հեռանալ այստեղից և վերադառնալ Մալագա, քանի որ այստեղ մնում եմ ինձ շատ հետաքրքրող մի հարցի պատճառով: Դրա մասին Ձեզ կպատմեմ մի ուրիշ օր: Ցտեսություն:

ՆՈՒՅՆԻՑ ՆՈՒՅՆԻՆ

Ապրիլի 10

Ի՛մ սիրելի և հարգարժան ուսուցիչ,

Ճիշտ է, որ խենթի պես սիրահարված եմ, բայց դոնյա Խուանայի մասին անգամ չեմ էլ մտածում: Միրեցյալիս անունը Իզաբելիտա է: Նա գեղեցկության, խոհեմության, անկեղծության և լավ դաստիարակության կատարյալ մարմնավորում է: Անհնար է թվում, որ դոն Գրեգորիոյի նման հասարակ և գեր մարդը կարող էր այդքան բարեկազմ, նրբագեղ և գեղեցիկ դուստր ունենալ: Նա դոն Գրեգորիոյի և նրա առաջին կնոջ դուստրն է: Եվ հիմա նրա խորթ մայրը՝ դոնյա Խուանան, նրան նախանձում է, ճնշում, իշխում ու համառորեն պնդում, որ պետք է ամուսնացնել նրան իր եղբոր՝ դոն Ամբրոսիոյի հետ, որն անհաջողակի մեկն է. նրա համար շատ հարմար է այս ամուսնությունը, քանի որ Իզաբելիտան իր մոր ժառանգն է և, ինչպես ընդունված է այս կարգի գյուղերում, հարմար հարսնացու է համարվում: Դոնյա Խուանան և դոն Ամբրոսիոն, վերջիվերջո, նույն արյունից են, և դոնյա Խուանան եղբորը նույն աչքով է նայում, ինչ իրեն և վերջինիս հավաստիացնում, որ Իզաբելիտան դոն Ամբրոսիոյի սերն է տենչում և փափագում նրա հետ ամուսնանալ: Հենց այսպես էլ ասել է դոն Գրե-

գործիոյին, և Իզաբելիտան էլ, խիստ վախեցած, չի համարձակ-
վում հակաճառել նրան և ոչ էլ անգամ հայտնել, որ ինձ է հա-
վանում, որ ես նրա փեսացուն եմ և այստեղ մնում եմ նրա հա-
մար:

Դոնյա Խուանան միշտ լուսանի սրատես աչքով հետևում
է Իզաբելիտային, որի հետ երբեք չեմ կարողացել անգամ մի
խոսք փոխանակել և որին չեմ համարձակվել նամակներ գրել,
քանի որ նա երբեք չէր ստանա այդ նամակները:

Կառատրակայի առողջարանից ի վեր, այդուհանդերձ, են-
թադրում էի, որ երիտասարդ աղջնակն ինձ սիրում է, քանի որ
ակամայորեն և միամտաբար, համակրանքով և սիրով պա-
տասխանում էր այն գաղտնի և քնքուշ հայացքներին, որոնք ես
ուղղում էի նրան:

Միայն դրան հավատալով՝ արդեն իսկ Ձեզ հայտնի
պատրվակով այստեղ եկա:

Կշարունակեի մնալ հիմարի դերում, եթե ճակատագիրն
ինձ ուղարկած չլիներ մի ազդեցիկ օգնականի: Խոսքն աղա-
խին Ռամոնսիկայի մասին է՝ դոն Գրեգորիոյի ծեր և հեռավոր
բարեկամը, որն իր տանը ծառայում է որպես տնտեսուհի: Նա
է մեծացրել Իզաբելիտային և պաշտում է նրան, միաժամանակ
տանել չի կարողանում դոնյա Խուանային, քանի որ վերջինս
վատ է վերաբերվում իր աղջնակին և իշխում նրան, ինչպես
նաև իր ձեռքից առել է այն ազդեցությունը, որը նախկինում նա
ունէր: Աղախին Ռամոնսիկայի շնորհիվ է, որ ինձ հետ կապ է
հաստատել, գիտեմ նաև, որ Իզաբելիտան ինձ սիրում է, բայց
երկչոտ է և ենթարկյալի կարգավիճակում և չի լինի իմ օրինա-
կան հարսնացուն և ո՛չ էլ նամակներ կգրի ինձ, ո՛չ կհամա-
ձայնվի տեսնվել ինձ հետ, ո՛չ էլ կմոտենա վանդակաճաղին՝
ինձ հետ զրուցելու, մինչև որ իրենց համաձայնությունը չտան
իր հայրը և նա, ով այսօր փոխարինում է իր մորը: Ես պնդել
էի, որ աղախին Ռամոնսիկան այնպես կազմակերպի, որ Իզա-
բելիտան ինձ հետ վանդակաճաղի հետևից զրուցի, բայց աղա-
խինն ինձ բացատրեց, որ դա անհնար է: Իզաբելիտան ներսի

սենյակներից մեկում էր քնում, որից դուրս գալու համար ստիպված էր անցնել իր խորթ մոր ննջասենյակի մոտով, բացի այդ, պետք է ձեռք բերեր բանալին, որը ննջասենյակի դուռը փակելուց հետո խորթ մայրն իր մոտ էր պահում:

Այսպիսի իրավիճակում եմ ես հայտնվել, բայց չեմ նահանջում և ոչ էլ հույսս եմ կորցնում: Աղախին Ռամոնսիկան շատ խորամանկն է և բավականին մեծ ջանքեր է գործադրում դոնյա Խուանայի գլուխը տանելու համար: Հույսս աղախին Ռամոնսիկան է:

ՆՈՒՅՆԻՑ ՆՈՒՅՆԻՆ

Ապրիլի 15

Ի՛մ սիրելի և հարգարժան ուսուցիչ,

Աղախին Ռամոնսիկան սատանայի մեկն է, սակայն ինձ համար նա բարերար է և փրկիչ: Չգիտեմ, թե նա ինչպես է գլուխ բերել այս գործը: Նրա շնորհիվ վաղը՝ երեկոյան ժամը տասին, ժամադրված եմ իմ հարսնացուի հետ: Աղախինը դուռը կբացի, և ես ներս կմտնեմ: Չգիտեմ, թե ուր կտանի դոնյա Խուանային, որպեսզի նա մեզ հանկարծակիի չբերի: Աղախինն ասում է, որ ես անհոգ լինեմ, քանի որ ամեն ինչ կատարելապես կազմակերպված է, և անգամ ամենափոքր ձախողումն էլ անհնար է: Հույսս նրա հնարամտությունն ու խոհեմությունն է: Հուսամ՝ աղախինն այնպիսի բան չի մտածել, որ վատ վերջաբան ունենա, բայց բոլոր դեպքերում նպատակն արդարացնում է միջոցները, իսկ այն նպատակը, որ ես եմ հետապնդում, ավելի լավը չէր կարող լիներ: Տեսնենք, թե ինչ կլինի:

ՆՈՒՅՆԻՑ ՆՈՒՅՆԻՆ

Ապրիլի 17

Ի՛մ սիրելի և հարգարժան ուսուցիչ,

Գնացի ժամադրության: Խորամանկ աղախինն իր խոս-

տումը կատարեց: Զգուշորեն բացեց փողոցի դուռը, և ես տուն մտա: Ձեռքս բռնած՝ ինձ աստիճաններով վեր բարձրացրեց, և անցանք մի երկար միջանցքի և երկու սրահների միջով: Հետո մտանք երկմոմանի լամպով լուսավորված մի մեծ սենյակ, որտեղից երևում էր հարևան ընդարձակ ննջասենյակը: Աղախինը գործի էր դրել մի սատանայական հնարք: Եթե նախապես տեղյակ լինեի նրա ծրագրերին, երբեք չէի համաձայնվի այն իրագործել: Դե, ուրեմն... անհնար է, որ գուշակեք, թե ինչ կատարվեց այնտեղ: Այդ գիշեր դոն Գրեգորիոն մնացել էր քնելու ագարակում, և նենգամիտ աղախին Ռամոնսիկան ինձ խաբելով տարավ դոնյա Խուանայի ննջասենյակ: Ինչքա՛ն մեծ էր իմ զարմանքը, երբ դեմ առ դեմ հանդիպեցի այդ սենյորայի հետ: Շատախոսության մեջ չմեղադրվելու համար չեմ հիշատակի այստեղ այդ ազնվական կնոջ գանգատներն ու բողոքները: Նրա ցավի և զայրույթի դրսևորումները՝ խղճահարության հետ զուգակցված, կարծելով նաև, որ ես իր նկատմամբ անհույս սիրո զոհն եմ և նման այլ ծայրահեղություններ. այդպես շշմած վիճակում չգիտեի, թե ինչ պատասխանել կամ ինչպես արդարանալ: Բայց սա վատթարագույնը չէր, ոչ էլ սրանով աղախին Ռամոնսիկայի նենգությունը սահմանափակվում էր: Դոն Գրեգորիոյին՝ այդ խաղաղասեր, բայց պատվախնդիր մարդուն, նա մի անանուն նամակ էր գրել՝ հայտնելով, որ իր կինը ժամը տասին ինձ հետ ժամադրություն է ունենալու: Չնայած որ դոն Գրեգորիոն դա գրպարտանք էր համարել և վստահում էր իր կնոջ առաքինությանը, դոն Ամբրոսիոյի հետ տուն եկավ դրանում համոզվելու համար:

Ձիուց իջավ, մտավ տուն և անաղմուկ, իր աներձագի ուղեկցությամբ, բարձրացավ աստիճաններով: Բախտի բերմամբ, թե աղախնու շրջահայացության շնորհիվ, քանզի ամեն ինչ նա նախապես կարգավորել էր, դոն Գրեգորիոն մթության մեջ մի նստարանի դեմ առավ, որն այնտեղ էին դրել, և աղմուկ-աղաղակով վայր ընկավ՝ մի քանի հայիոյանք տալով:

Շուտ վեր կացավ՝ առանց որևէ վնասվածքի, և գլխապա-

տառ ուղղվեց դեպի իր կնոջ ննջասենյակը: Այնտեղից մենք էլ լսեցինք դղրոյունն ու հայհոյանքները, և երեք քիչ թե շատ հանցավորներս սարսափից քարացանք: «Աստված իմ,– շնչակտուր բացականչեց դոնյա Խուանան:– Փախե՛ք, փրկե՛ք ինձ, ամուսինս գալիս է»: Ոչ մի հնար չկար սենյակից դուրս գալու՝ առանց դոն Գրեգորիոյին հանդիպելու, մնում էր միայն թաքնվել ննջասենյակում կամ էլ ապաստան գտնել հարևան՝ դոնյա Իզաբելիտայի սենյակում: Այդ իրարանցման մեջ աղախին Ռամոնսիկան արագ թևիցս բռնեց և, ի հաճելի զարմանս ինձ, քաշելով տարավ դոնյա Իզաբելիտայի ննջասենյակ: Երբ դոն Գրեգորիոն ներս մտավ, կինն այնքան շփոթահար էր, որ կասկածներն ավելի մեծացան, և ցանկացավ ամեն ինչ խուզարկել՝ ամեն քայլն իր աներձագի ուղեկցությամբ: Այսպիսով, երկուսն էլ մոտեցան Իզաբելիտայի սենյակին: Վերջինս, Ռամոնսիկա աղախինը՝ որպես հաշտարար, և ես՝ իբրև նրա փեսացու, խոնարհաբար ծնկի իջանք, խոստովանեցինք մեր մեղքը և հայտնեցինք, որ ցանկանում ենք այս ամենը հարթել ամուսնության սուրբ խորհրդով: Երբ դոն Գրեգորիոն ողջամիտ բացատրություններից հետո տեղեկացավ, թե ինչ ընտանիքից եմ սերում և ինչ հարստության տեր եմ, ոչ միայն իր համաձայնությունը տվեց, այլ պատրաստությունների անցավ, որ ինչքան հնարավոր է շուտ ամուսնանանք: Դոնյա Խուանան էլ դժկամորեն ստիպված էր նույնպես իր համաձայնությունը տալ՝ իր պատիվը փրկելու համար: Անգամ ինձ շնորհակալ եղավ, քանզի համաձայնվել էի զոհաբերել ինքս ինձ՝ նրա պատիվը փրկելու համար: Ավելի շնորհակալ եղավ Իզաբելիտային, որը, սիրահարված լինելով դոն Ամբրոսիոյին, նույն պատճառով նույնպես գնաց ինքնագոհության:

Չպետք է հերքեմ, սիրելի՛ ուսուցիչ, որ հնարամտությունը, որին դիմել էր աղախին Ռամոնսիկան, դատապարտելի էր, բայց միևնույն ժամանակ մի շատ մեծ առավելություն ուներ: Ես, որ այդքան սիրահարված էի դոնյա Խուանային, իսկ Իզաբելիտան՝ դոն Ամբրոսիոյին, չորսս էլ մեծ վտանգի էինք մեզ

ենթարկելու, եթե ես և իմ ապագա կինը շարունակեինք այստեղ մնալ: Ահա թե ինչու, հենց որ ստանանք քահանայի օրհնությունը, հիմնավոր պատճառ ունենք այստեղից հեռանալու, ինչպես և փախչելու այդ երկու գարշելի մարդկանցից, ինչպիսին են Իզաբելիտայի խորթ մայրն ու նրա եղբայրը:

ԴՈՆՅԱ ԽՈՒԱՆԱՅԻՑ ԴՈՆՅԱ ՄԻԿԱԵԼԱՅԻՆ՝ ՀԱՅՐ ԳՈՒՏԻԵՌԵՍԻ ՔՐՈԶԸ

Մայիսի 4

Ի՛մ բարեհոգի ընկերուհի,

Սրտիս ցավը թեթևացնելու համար պետք է Ձեզ պատմեմ, թե ինչեր են կատարվել: Միշտ համեստ եմ եղել: Ես ինձ ամենևին էլ գեղեցիկ և գրավիչ չեմ համարում: Եվ, այնուհանդերձ, չգիտեմ, թե ինչպես և, անկասկած, առանց իմ ցանկության և առանց դա զգալու, իմ աչքերից դժոխային կրակ է ժայթքում և կատաղի ձևով խենթացնում տղամարդկանց: Արդեն Ձեզ պատմել եմ, թե Կառատրակայում ինչ մոլեգին և հանցավոր կիրք էի ներշնչել դոն Պեպիտոյին, և ինչքան է նա ինձ համառորեն սիրահետել, վշտացրել, հետապնդել՝ գալով իմ գյուղ: Հավատացեք, որ հանդուգն այդ երիտասարդին բավականին առիթ ես չեմ տվել այդպես գործելու կամ, ավելի լավ է ասեմ, գահավիժելու, ինչպես եղավ մի քանի օր առաջ: Երբ ամուսինս բացակայում էր, անկոչ հյուրի պես և առանց մի ծպտուն անգամ հանելու, ներս է մտել տուն և իմ սենյակ՝ առաքինությանս բռնանալու: Ի՛նչ վտանգի մեջ ես հայտնվեցի: Ինչպիսի՜ դժվար կացություն նրա և ինձ համար: Դոն Գրեգորիոն եկավ, երբ նույնիսկ դա չէինք էլ կանխատեսում: Եվ քանի որ նա դեմ առավ նստարանին և ուժգին շրխկոցով վայր ընկավ, մի քանի հայհոյանք տվեց, որ իր սովորության համաձայն օգտագործում էր: Եթե դա տեղի չունենար, նա մեզ անակնկալի կբերեր: Աղախին Ռամոնսիկայի հնարամիտ ներկայությունը մեզ դժբախտ իրարանցումից և միգուցե մի արյու-

նալի ողբերգությունից փրկեց: Ի՛նչ կկատարվեր իմ խեղճ դոն Գրեգորիոյի հետ, որն այդքան գեր լինելով՝ դուրս գար մենամարտի: Նույնիսկ այդ մասին մտածելիս մազերս ցից-ցից են կանգնում: Աղախինը, բարեբախտաբար, դոն Պեպիտոյին տարավ Իզաբելայի սենյակ: Եվ այդ ձևով մեզ փրկեց: Ես նրան շատ շնորհակալ եմ: Բայց ավելի շատ երախտապարտ եմ կրքոտ դոն Պեպիտոյին, որն ինձ չվարկաբեկելու համար ձևացրեց, թե Իզաբելայի փեսացուն է, և անգամ իմ խորթ դուստրը հրաժարվեց դոն Ամբրոսիոյի հանդեպ իր սիրուց և ասաց, որ այդ մալագացի երիտասարդի հարսնացուն է: Երկուսն էլ գնացին կրկնակի ինքնագոհության, որպեսզի ես չկորցնեմ իմ հոգու հանգստությունն ու հեղինակությունը: Երեկ ամուսնացան և միանգամից տեղափոխվեցին այդ քաղաք: Երանի թե այդտեղ՝ մեզնից հեռու, մոռանան այն կիրքը, որ ես և իմ եղբայրը նրանց ներշնչել ենք: Թող Աստված տա, որ եթե անգամ չսիրեն միմյանց կրակոտ սիրով, ինչն անհնար է, երբ կրքոտ սեր ես տածել այլ մարդկանց հանդեպ, գոնե ձեռք բերեն այն քնքուշ ու ջերմ կապվածությունը, որն ամենաերկարն է պահպանվում և ավելի է համապատասխանում ամուսնացած մարդկանց: Իսկ ես դեռևս չեմ հաղթահարել իմ վախը: Այնքան դառնացած եմ և զգուշանում եմ այս ակամայից այրող կրակից, որ երբեմն թափվում է իմ աչքերից, որ մտադիր եմ երբեք ոչ մեկին չնայել կամ միշտ հայացքս գետնին գամված քայլել:

Լա՛վ մնացեք, ի՛մ բարեհոգի ընկերուհի, և Ձեր աղոթքներում Աստծուն խնդրեք, որ վերականգնեմ իմ հոգու խաղաղությունը, որ կորցրել եմ այդ սարսափելի պատահարի պատճառով:

*Թարգմանությունը՝ Սոնա Մխիթարյանի
(«Իսպաներեն լեզու և գրականություն» բաժնի մագիստրոս)*

Միգել դե Ունամունո *Miguel de Unamuno*

Միգել դե Ունամունոն հանրահայտ իսպանացի գրող, փիլիսոփա, հրապարակախոս է, որը վիթխարի ազդեցություն է ունեցել XXդ. իսպանական գրականության և մշակույթի վրա: Ունամունոն թողել է հսկայական գրական ժառանգություն, որում արծարծված փիլիսոփայական և բարոյահոգեբանական խնդիրները համամարդկային են և երբևէ չեն կորցնում իրենց արդիականությունը:

ՄԱՀՎԱՆ ՀԱՅԵԼԻՆ

Խեղճը... Մի դավադիր թույություն օրեցօր համակում էր նրա մարմինը: Ոչ մի բան անելու ցանկություն անգամ չունեի՝ ապրում էր առանց ապրելու ցանկության, գրեթե պարտականության պես: Առավոտյան դժվարությամբ էր վեր կենում անկողնուց, ինքը, որ մի ժամանակ հատուկ արթնանում էր՝ արևածագը դիմավորելու համար: Տնային հոգսերը գնալով նրա համար ավելի անտանելի էին դառնում:

Գարունը նրա համար այլևս նույնը չէր: Ծառերը, ձմեռային եղյամից ազատված, իրենց նորածիլ աղվափետուրներն էին սփռում, որոնց մեջ նոր-նոր թռչուններն էին բույն դնում. կարծես՝ ամեն ինչ վերածնվում էր: Միայն նա չէր վերածնվում:

– Սա էլ կանցնի, – կրկնում էր ինքն իրեն, – սա էլ կանցնի, – եռանդուն կերպով կրկնում էր նա՝ ցանկանալով հավատալ իր ասածին: Բժիշկը հավաստիացնում էր, որ այն ոչ այլ ինչ է, քան տարիքային ճգնաժամ, ընդամենը հարկավոր էր օդ և լույս, օդ և լույս: Եվ լավագույն տարբերակը լավ սնվելն էր:

Օ դ: Այն, ինչ ունեին իրենց շրջապատում, օդն էր՝ ազատ, արևոտ, ուրցի բույրով և ախորժաբեր: Չորս կողմից բացվում էր տնից դաշտ ընկած տեսարանը. ծաղկուն, փարթամ մի հողակտոր, որն Աստծո կողմից տրված մի օրհնություն էր: Եվ

լո՛ւյս, լու՛յս, նույնպես ազատ: Իսկ ինչ վերաբերում է ուտե-
լուն՝ «բայց մայրիկ, ես ցանկություն չունեմ...»:

– Դե, աղջի՛կ կե՛ր և փա՛ռք Աստծո, որ ոչ մի բանի կարիք
չունենք, կե՛ր, – աղերսական ձայնով կրկնում էր մայրը:

– Բայց եթե ցանկություն չունեմ, արդեն ասել եմ...

– Կարևոր չէ: Կե՛ր և վերջ:

Խեղճ մայրն ավելի վշտացած էր, քան ինքը, քանի որ վա-
խենում էր, որ կկորցնի իր վաղածամ այրիության գլխավոր
սփոփանքը, ուստի իր առջև նպատակ էր դրել «բտել» նրան,
ինչպես հնդկահավերին: Արդյունքում դա նրա մոտ սրտխառ-
նոց առաջացրեց, և ամեն ինչ իզուր էր: Ուտում էր մի թռչնակի
չափ: Խեղճ այրին ծոմ էր պահում՝ ի ընծա Սուրբ Կույսին՝ ա-
խորժակ խնդրելով աղջկա համար, ուտելու ախորժակ, ապրե-
լու ախորժակ:

Եվ սա Մաթիլդեի հետ կատարվող ամենասարսափելի
բանը չէր. մարմնի թուլությունը, գունատությունը, խամրա-
ծությունը կամ թոշնումը չէր պատճառը, այլ իր փեսացուն՝
Խոսե Անտոնիոն, որ գնալով ավելի սառն էր դառնում իր հան-
դեպ: Իրավիճակից, այո՛, ելք էր փնտրում, դրանում ոչ մի կաս-
կած, աղջկանից խուսափելու և նրան լքելու ելք էր փնտրում:
Նա առաջինը նրան հորդորեց և խնդրեց, որ արագացնեն հար-
սանիքը, կարծես վախենում էր ինչ-որ բան կորցնելուց և
հոնքերը կիտեց ի պատասխան մոր ու աղջկա ասած
խոսքերին. «Ո՛չ, դեռ ո՛չ, մինչև չկազդուրվեմ, այսպես չեմ կա-
րող ամուսնանալ»: Անգամ ասաց, որ ամուսնությունը թերևս
նրա վիճակը կթեթևացներ, կբուժեր, իսկ նա տխուր պատաս-
խանեց. «Ո՛չ, Խոսե Անտոնիո, ո՛չ, սա սիրո հիվանդություն չէ,
սա ուրիշ բան է, կյանքի հիվանդություն է»: Խոսե Անտոնիոն
նրան լսում էր՝ տխուր և մռայլ:

Երտասարդը շարունակում էր գալ ժամադրություններին,
բայց զուտ պարտքի զգացումից դրդված. ժամադրության ամ-
բողջ ընթացքում նա ցրված էր, և կարծես ինչ-որ հեռավոր մի
բան զբաղեցնում էր նրա միտքը: Արդեն չէր խոսում ապագայի

պլաններից, կարծես թե այն նրանց համար մեռած էր: Կարծես թե այդ սերը այլևս չկար՝ անցած էր: Նայելով նրան, ինչպես կնայեր հայելուն, Մաթիլդեն ասում էր.

– Բայց ասա՛ ինձ, Խոսե՛ Անտոնիո, ասա՛, ի՞նչ է քեզ պատահել, որովհետև դու այն չես, ինչ նախկինում էիր:

– Ինչե՞ր են մտքովդ անցնում, աղջի՛կ: Ո՞վ պետք է լինեմ:

– Լսի՛ր, եթե հոգնել ես ինձնից, եթե ուրիշին ես հավանում, թո՛ղ ինձ, Խոսե՛, թո՛ղ ինձ մենակ, չեմ ուզում, որ ինձ համար քեզ զոհաբերես:

– Ձոհաբերեմ ի՞նձ, բայց... ո՞վ է քեզ նման բան ասել, աղջի՛կ, ո՞վ է ասել, որ զոհում եմ ինձ: Բավակա՛ն է հիմարություններ ասես, Մաթի՛լդե:

– Ո՛չ, ո՛չ, մի՛ թաքցրու, դու այլևս ինձ չես սիրում, ինչպես առաջ, ինչպես ես սկզբում...

– Ինչպե՞ս թե քեզ չեմ սիրում...

– Ո՛չ, ո՛չ, առաջվա պես չես սիրում, ինչպես սկզբում...

– Դե, սկզբում...

– Միշտ պետք է սկիզբ լինի, Խոսե՛ Անտոնիո, սերը միշտ պետք է սկիզբ ունենա, միշտ պետք է այնպես սիրել, ասես սկիզբը լինի...

– Լավ, լաց մի՛ եղիր, Մաթիլդե, լաց մի՛ եղիր, քեզ ավելի վատ կզգաս...

– Ինձ վա՞տ կզգամ, վա՞տ: Հետո վատ կզգամ:

– Վա՞տ..., ոչ..., բայց..., լոկ մտքեր են:

– Դե լսի՛ր, չեմ ուզում, այո՛, չեմ ուզում, որ պարտքի զգացումից դրդված ինձ այցելես:

– Ինձ դո՞ւրս ես անում ինչ է:

– Ե՛ս եմ քեզ դո՞ւրս անում, Անտոնիո, ե՞ս:

– Թվում է, թե նպատակ ունես, որ հեռանամ:

Խեղճը սկսեց էլ ավելի հեկեկալ: Հետո, փակվելով իր քիչ լուսավորված ու տխուհի սենյակում, Մաթիլդեն նորից ու նորից էր նայում ինքն իրեն հայելու մեջ:

– Ոչ, մեծ բան չէ,– ասում էր նա,– բայց շորերը գնալով մե-

ծանում են հագովս, ավելի լայն են, այս շապիկը թույլ է հագովս, կարող եմ երկու ձեռքս էլ մեջը դնել, շրջագգեստիս ստիպված եղա ավելի շատ ծալքեր անել... Այս ի՞նչ է, Աստված իմ, ի՞նչ: – Ե՛վ լացում էր, և՛ աղոթում:

Բայց լրանում էր նրա քսաներեք տարին, կարծես հաղթում էր մայրը. Մաթիլդեն նորից երագում էր կյանքի մասին, կենսունակ ու աշխույժ, թարմ ու արևոտ կյանքի՝ լի լույսով, սիրով ու դաշտերով, մեծ ապագայով, առօրյա հոգսերով, երեխաներով և ո՞վ գիտե, գուցե և մի քանի թոռներով տան մասին: Եվ իրենք, որպես երկու ծերունիներ, ջերմորեն կվայելեին կյանքի վերջալույսի բերկրանքը:

Խոսե Անտոնիոն սկսեց բացակայել ժամադրություններից և մի անգամ՝ իր հարսնացուի հերթական դժգոհությունների ժամանակ, որ իրեն այլևս առաջվա պես չի սիրում, և կարող էր լքել իրեն, եթե առաջվա պես չէր սիրում, պատասխանեց՝ աչքերը հատակին հառելով.

– Այնքան ես համառում, որ ի վերջո...

Մաթիլդեն նորից սկսեց հեկեկալ, և նա տղամարդուն բնորոշ կոպտությամբ ասաց. «Եթե ամեն օր ինձ արցունքներով ներկայացում ցույց տաս, ես կլքեմ քեզ»: Խոսե Անտոնիոյի համար անհասկանալի էր արցունքներով լի սերը:

Մի օր Մաթիլդեն իմացավ, որ իր փեսացուն ուրիշին է սիրահետում, իր մտերիմ ընկերուհիներից մեկին: Եվ նրան ասաց այդ մասին. Խոսե Անտոնիոն այլևս չվերադարձավ:

Խեղճն ասում էր մորը.

– Ես ինձ լավ չեմ զգում մայրիկ, ես մահանում եմ:

– Աղջի՛կս, հիմարություններ մի՛ ասա, ես քո տարիքում ավելի վատ էի, ես չափազանց նիհար էի: Հիմա տեսնո՞ւմ ես ո՞նց եմ ապրում: Սա ոչինչ է: Միայն թե համառորեն չես ուտում:

Սակայն մայրը, միայնակ փակված իր սենյակում, արցունքներն աչքերին, լուռ մտածում էր. «Կոպիտ, չափազանց կոպիտ վարվեց... Ինչո՞ւ մի փոքր չսպասեց, մի փոքր, այո՛, ոչ շատ... նրան ժամանակից շուտ է սպանում... »:

Անցնում էին օրերը՝ միանման ու միապաղաղ՝ յուրաքանչ-

յուրն իր հետ տանելով մեկական թել Մաթիլդեի կյանքի կտավից: Մոտենում էր սուրբ Ֆրեսնեդայի օրը, որի ժամանակ գյուղացիներն իրենց պաշտելի մատուոն էին գնում, օգնություն խնդրում իրենց կարիքների համար, ուխտագնացությունից վերադառնում էին պարելով, խաղալով, երգելով ու բացականչություններով: Երիտասարդները վերադառնում էին՝ աղջիկների ձեռքերը բռնած, նրանց հետ գրկախառնված, երգելով, պարելով, թռչկոտելով, մերթ ընդ մերթ մի ամոթխած համբույր գողանալով: Մեծահասակները ծիծաղում էին՝ հիշելով և կարոտելով իրենց պատանեկությունը:

– Լսի՛ր, աղջիկս, – ասաց մայրը Մաթիլդեին, – Աստվածամոր տոնը մոտենում է, պատրաստի՛ր քո լավագույն զգեստը: Կիսնդրես նրան, որ քեզ ախորժակ տա:

– Ավելի լավ չի՞ լինի, մայրիկ, առողջություն խնդրել:

– Ո՛չ, ախորժակ, աղջիկս, ախորժակ: Այդպիսով կվերականգնվի առողջությունդ: Ճիշտ չէ շատ բան խնդրել, անգամ Սուրբ Կույսից: Անհրաժեշտ է քիչ-քիչ խնդրել, այսօր մի բան, վաղը՝ մի ուրիշ: Հիմա՝ ախորժակ, այդպես կապաքինվես, իսկ հետո...

– Հետո ի՞նչ, մայրիկ:

– Հետո ավելի արժանապատիվ և ավելի երախտապարտ փեսացու, քան այդ վայրագ Խոսե Անտոնիոն էր:

– Նրա մասին վատ մի՞ խոսիր, մայրիկ:

– Ինչո՞ւ վատ չխոսեմ նրա մասին: Եվ դա ինձ ասում ես դո՞ւ: Թողեց քեզ, իմ գառնուկ, և ո՞ւմ համար: Այդ անձոռնի Ռիտայի համար ր:

– Վատ մի՛ խոսիր Ռիտայի մասին, մայրիկ, նա անձոռնի չէ: Հիմա նա ինձնից էլ գեղեցիկ է: Եթե Խոսե Անտոնիոն այլևս ինձ չի սիրում, ինչո՞ւ պետք է շարունակի խոսել ինձ հետ: Կարեկցանքից դրդվա՞ծ: Կարեկցանքի՞ց, մայրիկ, կարեկցանքի՞ց: Ես շատ հիվանդ եմ, ես դա գիտեմ, շատ հիվանդ: Իսկ Ռիտային նայելը հաճույք է պատճառում, այնքա՛ն կարմրաթուշիկն է, այնքա՛ն կենսուրախ ...

– Լռի՛ր աղջիկս, լռի՛ր: Կարմի՞ր: Այո՛, ինչպես լուրիկը: Բա-

վակա՛ն է: Բավակա՛ն է:

Եվ մայրը գնաց արտասվելու:

Եկավ տոնախմբության օրը: Մաթիլդեն հագել էր ամենալավ զգեստը, հնարավորինս գուգվել, և նույնիսկ խեղճը ներկել էր այտերը: Եվ մայր ու աղջիկ գնացին մատուռ: Ժամանակ առ ժամանակ աղջիկը ստիպված էր լինում հենվել մոր ձեռքին, իսկ երբեմն նաև նստում: Նայում էր գյուղին՝ կարծես հրաժեշտ տալով և նույնիսկ չիմանալով այդ մասին:

Շուրջբոլորը ուրախությամբ ու թարմությամբ լի էր: Ծիծաղում էին և՛ մարդիկ, և՛ ծառերը: Մաթիլդեն մտավ մատուռ և մի անկյունում ոսկրոտ ծնկներով ծնկի իջավ հատակի քարե սալիկներին, ոսկրոտ արմունկներով հենվեց փայտե նստարանին, շնչապատառ լինելով աղոթե՛ց, աղոթե՛ց, աղոթե՛ց՝ զսպելով արցունքները: Շուրթերով մի բան էր թոթվում, իսկ մտքում՝ լրիվ այլ բան: Եվ հագիվ կարողացավ տեսնել Աստվածամոր շողացող դեմքը, որի վրա արտացոլվում էր մեծ մոմերի բոցը:

Դուրս գալով մատուռի կիսախավարից դեպի շքեղ գյուղի լուսավորություն՝ բռնեցին վերադարձի ճամփան: Երիտասարդները վերադառնում էին, ինչպես ծառս եղած քուռակներ՝ հագեցնելով ամիսների ընթացքում փայփայած ախորժակը: Վազում էին երիտասարդներն ու օրիորդները, իրենց ուրախ ճղճղոցներով հրահրում իրենց հետապնդողներին [...]:

Մաթիլդեն ամեն ինչին նայում էր տխրությամբ, իսկ առավել տխուր նայում էր նրա մայրը՝ այրին:

«Ես չեի կարողանա վազել, եթե այդպես ինձ հետապնդեին,– մտածում էր խեղճ օրիորդը,– ես չեի կարողանա հրահրել և բորբոքել նրանց իմ վազքով և գոռոցներով»:

Հանդիպեցին Խոսե Անտոնիոյին, որը Ռիտայի ուղեկցությամբ նրանց կողքով էր անցնում: Չորսն էլ իջեցրին հայացքերը:

Ռիտան գունատվեց, հետո կարմրեց, մթնշաղի կարմրությունը գունավորեց Մաթիլդեի այտերը, որտեղից զեփյուռը մաքրել էր գույները: Խեղճ օրիորդը զգաց մի ճնշող հարգանք, մի սարսափելի հարգանք, մի ողբերգական հարգանք, մի անմարդկային և դաժան հարգանք: Ի՞նչ էր դա: Կարեկցա՞նք էր:

Անհանգստություն էր: Վա՞խ էր: Օ՛, այո՛, միգուցե վախ էր: Այդ քսաներեք տարեկան խեղճ աղջնակը վախ էր ներշնչում: Եվ երբ մտածում էր ուրիշների այդ ենթագիտակցական և սարսափելի վախի մասին, որն ականա նկատում էր նաև իրեն նայող անցորդների աչքերում, սիրտն էլ ավելի էր դողում:

Եվ այսպես անցավ իր տան շքամուտքով, հրեց դուռը, ընկավ նստարանին և մահը շուրթերին գոռաց.

– Ա՛յ մայրիկ, մայրիկ, ի՞նչ եմ անելու: Ի՞նչ եմ անելու, երիտասարդներն ինձ հետ նույնիսկ չարաճճիություն չարեցին՝ ո՛չ հաճոյախոսություններով, ո՛չ կարեկցանքով, ինչպես ուրիշներին, ինչպես տգեղներին: Ի՞նչ եմ անելու: Սու՛րբ Կույս, ի՞նչ եմ անելու: Չարաճճիություն չարեցին..., ինձ հետ չարաճճիություն չարեցին երիտասարդները, ինչպես նախկինում: Ո՛չ էլ կարեկցեցին, ինչպես տգեղներին: Ի՞նչ եմ անելու մայրիկ, ի՞նչ եմ անելու:

– Վայրագնե՛ր, վայրագնե՛ր, վայրագնե՛ր, – ասաց այրին, – վայրագնե՛ր, չարաճճիություն չարեցին իմ աղջկա հետ, չարաճճիություն չեն արել: Ի՞նչ էր ձեզանից պահանջվում: Այն էլ այն անձոռնիներից հետո... Վայրագնե՛ր:

Եվ նա վրդովված էր, ինչպես կվրդովվեր սրբապղծությունից: Եվ հենց այդպես էր, որ կար, քանի որ չարաճճիություն անելն այդ սուրբ տոնակատարության ծեսերից մեկն էր:

– Ի՞նչ է լինելու ինձ հետ, մայրիկ, ի՞նչպես կլինեմ, երբ նույնիսկ կարեկցանքից դրդված երիտասարդներն ինձ հետ չարաճճիություն չարեցին:

Գիշերն անցկացրեց լացելով ու տխրելով, իսկ առավոտյան չցանկացավ իրեն նայել հայելու մեջ: Եվ Ֆրեանեդայի կույսը՝ կարեկցանքների մայրը, լսելով Մաթիլդեի աղաչանքները, տոնախմբությունից երեք ամիս անց նրան տարավ, որպեսզի իր հետ չարաճճիություն անեն հրեշտակները:

*Թարգմանությունը՝ Աննա Վարդանյանի և Մերի Ասոյանի
(«Միջմշակութային հաղորդակցություն՝ իսպաներեն»,
մագիստրատուրա, 2-րդ կուրս)*

Mikael Hovhannisyan (1867-1933) es un eminente escritor armenio conocido por su apodo *Nar-Dos* y uno de los representantes más célebres del realismo social. En sus obras la figura más representativa es el ser humano con sus cualidades morales. «La paloma matada» del escritor fue llevada al cine armenio en 2009.

LA PALOMA MATADA

(fragmento)

Serían las dos de la madrugada. Ya tenía la mente entumecida. Dejé de escribir, me levanté y estaba a punto de irme a dormir cuando llamaron a la puerta. Al principio pensé que era una simple alucinación del oído —provocada por el profundo silencio de la madrugada, pero no— volvieron a llamar y esta vez con más fuerza e intensidad.

¿Os habéis fijado cuando uno está tranquilamente sentado en su casa y cuando se desvanecen todos los sonidos interiores y exteriores cuán misterioso suena el timbre a altas horas de la madrugada?, como si fuera un mal agüero que intimida el corazón. Entonces me invadió un temor semejante, sin querer; no esperaba a nadie a esa hora. El criado de mi amo que a la vez me servía a mí, ya hacía tiempo que estaba durmiendo y su sueño era tan profundo que si en vez del timbre sonara un *zurná*⁵ en sus oídos, no se despertaría. Así que yo tenía que ir a abrir la puerta y mientras bajaba las escaleras del vestíbulo oscuro, llamaron a la puerta por tercera vez.

Cuando abrí la puerta, en el único escalón de piedra del umbral estaba Gareguín Sisakyan —un muy amigo mío a quien no supe reconocer inmediatamente en la oscuridad nocturna.

—¿Gareguín, eres tú? —exclamé muy sorprendido por su visita tan intempestiva.

—Soy yo.

—¿Qué ha pasado?

⁵ *Zurná*: instrumento musical de considerable sonoridad.

—Nada.

—Entonces, ¿por qué has venido?

—Por nada.

—¿Cómo que por nada?

—Sé que te acuestas tarde, por eso he venido.

—¿Por qué, eh...?

En vez de contestarme se echó a reír dulce y extrañamente.

Por el tono de su voz noté que estaba de muy buen humor: la intensa oscuridad de la noche impedía ver la expresión de su cara.

—¿Sabes qué hora es? —pregunté.

—*Счастливые часов не наблюдают*⁶ —dijo él y volvió a reírse.

No sé por qué, pero de repente tuve la sensación de que él había perdido el juicio, sobre todo, porque sabía que era un joven de raros pensamientos. Y esa sospecha me impactó tanto que durante unos minutos me quedé estupefacto.

—¡Hala, subamos!, te tengo que dar una noticia muy importante —dijo él y entró empujándose suavemente.

No me quedaba otro remedio sino acompañarle hasta mi cuarto. Me moría de curiosidad.

Se sentó delante de mi escritorio y me lanzó miradas interrogativas que parecían decir: «A ver, ¿sabes la noticia que te voy a dar? ».

Y yo le observé asombrado. Llevaba un sobretodo que casi nunca usaba, un chaleco blanco, muy limpio y una corbata completamente nueva y cara. Tenía la misma cara redonda llena de buena salud pero privada de cualquier destello de virilidad. Solo sus ojos permanentemente sonrientes, vivos testigos de su poca voluntad mitológica y carácter dócil, brillaban de una felicidad loca, inmensa e idiota. Pero aquellos ojos estaban algo turbados y durante un instante incluso me pareció que su aliento olía a vino.

—¿Estás borracho? —dije yo mirándole fijamente a los ojos.

—Sí, como dicen he empuinado un poco el codo —confesó él riéndose levemente.

—Se ve que vienes de visita, ¿dónde estabas?

—¿Dónde estaba? ... Si te digo no me vas a creer.

⁶ *Счастливые часов не наблюдают*: quien es feliz no mira el reloj.

— ¡Venga, vamos, no temas!, te veo en semejante estado que lo que digas igualmente voy a creer.

Durante un breve rato me miró sonriendo. Al parecer estaba vacilando entre decir o dejar que acertara yo. Acto seguido dio un salto repentino, me abrazó fuertemente y me murmuró al oído:

—Esta noche me he comprometido.

Y dándome un gran beso bajo la oreja se apartó y comenzó a observarme sin dejar de sonreír, como si quisiera comprobar la impresión que su noticia me había causado.

Y yo me quedé de una pieza por la sorpresa de esa noticia repentina. Y como bajo aquella impresión no pude decir nada, simplemente le miré con gran asombro, y él me enseñó su dedo anular de la mano derecha que llevaba un simple anillo de oro y dijo con cierta jactancia:

—Si no me crees, mira esto.

—¿Entonces ahora vienes de allí?

—Sí, vengo directamente de la casa de mi novia.

—¡Para darme esa noticia a esta hora! ¿No podías esperar hasta mañana?

—¿Hasta mañana...?, ¿de dónde sacaría tanta paciencia...? ¿Y adónde me iría? ¿A casa donde no hay ni un ser familiar con quien pudiera compartir mi alegría? ¿Y qué iba a hacer hasta mañana? ¿Dormir?, ¡no tengo sueño! Si supieras lo que siento en todo mi ser: se me regocija el corazón, se me alegra el alma, tengo ganas de hablar, bailar, me parece que tengo alas sobre los hombros y si las sacudo, voy a volar, ¡así..., así...!

Y en efecto, dio un salto con los brazos abiertos, cogió mi cabeza entre las manos y, a pesar de la resistencia, igual que un loco me dio un sinnúmero de besos en la cara.

Sus efusiones cordiales eran tan ridículas pero a la vez tan sinceras que despertaron en mi alma una vehemente ternura fraternal, propia al hermano mayor, hacia aquel gran niño a quien siempre amaba por su mitológica sencillez e inocente carácter infantil.

Apenas pude calmarle, invité a sentarse y comencé el interrogatorio.

—Aunque tengo derecho a ofenderme, has dado un paso tan importante sin que yo sepa, te perdono —dije yo— porque como veo

has estado secretamente enamorado de ella y has optado por llevar a cabo el asunto a hurtadillas pensando que yo podría ser un obstáculo. ¿es cierto?

—¡No, no es cierto!

—¿Entonces...?

—Yo no he estado enamorado de ella, esta tarde la he visto por primera vez.

—¿A quién?, ¿a la novia?

—Sí.

—¿Te has comprometido con ella?

—Sí.

Mi asombro aumentó aún más. Si no le conociera pensaría que estaba bromeando.

—¡Oye, Gareguín!, hace poco, allí, en la entrada, esta visita tuya tan intempestiva, por un instante, me hizo poner en tela de juicio tu estado mental. Ahora te pregunto directamente si no te has vuelto loco.

—¿Por qué?

—¿Acaso entiendes lo que estás diciendo? ¿Es posible que la veas a la chica por primera vez y enseguida te comprometas con ella?

—Pero ¿por qué no?, si me agradó mucho. Te voy a contar otra cosa. Mi padre decía que su padre se había comprometido sin haber visto a su futura esposa.

—¿Pero eso sucedió cuándo? ¿Ciento cincuenta años antes? ¿Acaso no te das cuenta en que época vives?, y tú que eres un hombre erudito e inteligente ¿te comparas con tu abuelo iletrado e ignorante?

—¡No te creas nunca esa gran mentira, Mikael! —dijo él con una tranquilidad irrefutable—. El casamiento es cuestión de suerte. Si te cuento los detalles, verás que realmente es cuestión de suerte. Además el amor es ciego, no mira si eres inteligente o ignorante.

*Traducido por Armine Manukyan
Profesora del Departamento de Español
de la Universidad Estatal de Ereván.*

UNO DE LOS DÍAS AMARGOS

(fragmento)

Patrikián echó un vistazo a su ropa vieja, miró las puntas torcidas de los zapatos, salió de la habitación, echó el candado a la puerta, metió las llaves en el bolsillo, pasó a lo largo del pasillo y subió al amplio balcón de la morada del amo de casa. El balcón, iluminado por los primeros y resplandecientes rayos de sol, era de color rojizo y tan limpio que relucía como el espejo. Le parecía que los animales a la hora de llevarlos al matadero debían sentir exactamente lo mismo que sentía él en ese preciso momento. Él era un joven flaco de ojos muy bondadosos y de movimientos inseguros. Al ver al criado *imerel*⁷ salir de la cocina le pidió en voz baja avisar al amo que quería verlo. El criado fue a cumplir su petición dejando caer las largas y amplias mangas del *chokha*⁸ gris dobladas hacia atrás. Patrikián le siguió con la mirada fijándose en sus botas suaves sin tacón que al andar no hacían ni el más mínimo ruido. Después echó un vistazo hacia la ventana abierta de la cocina donde el cocinero vestido totalmente de blanco, con el *arakhchi*⁹ niveo y limpio, desplumaba con movimientos hábiles pollos recién degollados y silbaba una melodía. El criado salió y le hizo un ademán con la mano. Patrikián atravesó con cuidado el balcón, limpió los zapatos en el umbral de la puerta, entró en el comedor acompañado por el criado y desde allí fue al espacioso salón de techos muy altos que estaba perdido entre enormes floreros, sillas, butacas, mesas, sillones y sofás, y se paró enfrente de la puerta del despacho del amo de casa. El criado abrió la puerta, le invitó a Patrikián a entrar y se fue.

⁷ *Imerel*: georgiano de la región de Imericia situada en la parte central de Georgia.

⁸ *Chokha*: abrigo de paño de pura lana.

⁹ *Arakhchi*: tipo de gorro.

Ni el creyente más fanático entraría en el santo altar con tal pavor como lo hizo Patrikián al entrar en el despacho del amo de casa. En el tablero de cobre de la solemne puerta de entrada de la calle estaba grabado el apellido del amo: David Fomich Adamirov, que era un hombre de unos 40 o 45 años, de rostro fibroso parecido al bronce fundido, de pelo duro y canoso y llevaba una barba corta y afilada. Él estaba escribiendo en un enorme escritorio sobrecargado de papeles, carpetas y libros e innumerables cosillas.

—Perdone, yo enseguida... —dijo él observando durante un instante al visitante por encima de los anteojos de pinza y continuó escribiendo.

Patrikián se quedó parado.

—Siéntese, por favor, —dijo el amo de casa sin dejar de escribir.

Patrikián se sentó lentamente sujetando el gorro en las rodillas y miró a su alrededor. La habitación estaba adornada de forma tan exuberante como si fuera una sala. El mobiliario no se distinguía tanto por el gusto como por su anhelo hacia una vida cómoda. Allí donde paraba su mirada había alfombras y almohadillas de terciopelo, había también una estantería bien larga con puertas de cristal cuyos estantes estaban llenos de libros encuadernados en oro y colocados uno al lado de otro de forma tan sistemática como una tropa. Sin duda, esa estantería formaba parte del mobiliario y de las decoraciones imprescindibles. En cambio, a Patrikián no le parecía que David Fomich tuviera tiempo para tomar en las manos uno de aquellos libros de varios volúmenes porque estaba muy ocupado con sus actividades privadas y públicas. Él era empresario, titulado de la Duma Municipal, miembro de algunas comisiones municipales, así como miembro del consejo de administración del Banco, dirigente del Club, patrocinador de la escuela, coadjutor de la iglesia y quién sabe qué más.

Aprovechándose del hecho de que el amo seguía escribiendo con la cabeza agachada, Patrikián quiso levantarse para echar un vistazo a los libros de la estantería pero no se atrevió a moverse. Él volvió la vista hacia el amo y vio que él escribía con movimientos atrevidos de la mano y se mordía sin cesar el lado izquierdo del labio superior.

—Pues, ¿qué se le ofrece? —dijo David Fomich cuando terminó de escribir golpeando repetidamente el pesado secante de mármol negro sobre el papel escrito.

—Yo... perdone —pronunció Patrikián en voz baja con una confusión propia de una persona que había preparado su discurso de antemano. —Ayer por la noche Vd. me hizo recordar el alquiler de mi habitación... Yo he venido a pedirle esperar unos días más, si es posible.

El amo de casa tomó sus anteojos de pinza, apoyó los codos en el escritorio y le miró con una mirada seria y diligente.

—Estimado hermano, —dijo él— creo que hace ya siete días que estoy esperando.

Patrikián bajó la mirada.

—Sí, pero le pido unos cuantos días más... si es posible, por favor.

—El problema no está en unos cuantos días —replicó David Fomich. —Unos cuantos días más... ¿bueno y por qué no?, se puede esperar y Vd. ve que lo estoy haciendo. Lo malo es que dentro de unos días cuando me vea obligado a recordarle de nuevo su deuda, Vd. vendrá a verme como lo ha hecho ahora y otra vez me pedirá lo mismo, que espere unos días más. Lo sé por experiencia y no se ve dónde está el término. Por consiguiente siendo yo mismo una persona muy puntual tengo establecida una regla bien drástica: si uno de mis inquilinos no paga el alquiler a tiempo y de forma sistemática entonces le invito a desocupar de inmediato la habitación. Y ahora le digo a Vd.: si no puede pagar el alquiler, entonces desocupe la habitación. Yo mismo tengo que efectuar pagos mensuales y mi acreedor, es decir el banco, no puede esperar infinitamente como lo hago yo.

David Fomich hablaba en tono resuelto y le miraba de forma penetrante a la pobre e indigente cara de Patrikián.

—Yo comprendo su estado —balbuceó Patrikián, aunque no entendía en absoluto qué importancia podrían tener para ese hombre tan adinerado aquellos miserables rublos que él pagaba mensualmente. —Pero trate Vd. de comprender también el mío, por favor. Yo trabajaba de maestro en la provincia, pero como Vd. sabe el gobierno cerró todas nuestras escuelas y ahora estoy en paro. Quería ir al extranjero para continuar mis estudios, por eso recurrí a la ayuda de patrocinadores, pero se me la denegaron. Después empecé a trabajar como dependiente a cargo de un mercader. Esperaba ahorrar tanto

para poder realizar ese anhelo, pero caí enfermo y gasté todo el dinero que tenía ahorrado. Ahora no tengo absolutamente nada, incluso hay días que paso ham....

—¿Para qué me cuenta esas cosas? —se apresuró a interrumpirle David Fomich y en su cara de bronce aparecieron evidentes signos de aborrecimiento y disgusto. —Vd. es un joven educado y su egoísmo no le debería permitir contarle a los demás los detalles de su vida privada. Yo también tengo miles de problemas, ¿se los cuento? No está bien, eso no está nada bien. Vd. me dice que espere unos días más, pues muy bien, esperaré algunos días más. Lo único que no comprendo es cómo podrá pagar, si me dice que no tiene nada y está en paro.

Patrikián bajó la mirada y automáticamente empezó a jugar con el gorro que tenía en las rodillas.

—Yo... sabe usted ...yo... tengo publicados dos libros —dijo él confuso, como si se avergonzara de haber hecho semejante cosa— llevo ya mucho tiempo sin pasar por la librería, hoy pasaré, quizá los hayan vendido, para que ...

—¿Es Vd. escritor? —preguntó el amo mirando perplejo a sus ojos desconcertados.

—No se puede decir que soy escritor, pero ... bueno, escribo.

—¿Y qué escribe?

Patrikián levantó la cabeza y le miró con una sonrisa tímida.

—¿Quién sabe? ... sí, escribo, pero nada más...

—Bueno, es asunto suyo —dijo el amo y se levantó. Al verlo levantarse Patrikián hizo lo mismo. —Su vecina, esa mujer judía que vende cuchillos y cerraduras al lado de la puerta del patio lleva diez años viviendo aquí y no recuerdo ni un mes que no haya pagado con puntualidad el alquiler y la comida y eso cuando ella sola mantiene una gran familia. Te lo digo porque...

Él no llegó a terminar la frase, pues al parecer de repente recordó algo y súbitamente empezó a revolver los papeles esparcidos sobre el escritorio.

—¡Bueno, adiós! —dijo sin prestar más atención a Patrikián—. Esperaré unos días más.

Patrikián salió. Al pasar por el comedor vio a la esposa del amo de casa —que era una mujer muy alta y flaca, de cara más bien

antipática— lavar las tazas de té al lado del samovar de plata que estaba puesta en el borde de la mesa. Su hijo pequeño estaba junto a ella untando mantequilla y miel al pan y lo devoraba con avaricia.

—¿Ha traído el alquiler de la habitación? —gritó detrás de Patrikián la ama, cuando él se dirigía sigilosamente hacia la puerta del balcón.

Patrikián se detuvo.

—No, señora.

—¿Por qué?

—Le pedí al señor y él consintió esperar unos días más.

—Unos días más, unos días más... —replicó ella en tono bastante grosero echando té en la taza del niño. —No tenemos ni idea cuándo van a terminar sus unos días. Vd. se aprovecha de la bondad de mi esposo. No se puede así. O debe Vd. pagar a tiempo, o si no puede, tiene que desocupar la habitación.

—Señora, —quiso justificarse Patrikián, pero la señora le interrumpió con mucha más brusquedad.

—Ni siquiera quiero escucharlo.

E irritada se volvió hacia el bufete.

Patrikián apretó los labios entre los dientes y salió.

*Traducido por **María Ghazaryan**
Universidad Estatal de Ereván, Maestría,
«Lengua y Literatura españolas».*

Vardgués Petrosián
Վարդգես Պետրոսյան

Vardgués Petrosián (1932-1994) fue un destacado novelista, dramaturgo, ensayista armenio. Dejó una gran herencia literaria. En 1954 se graduó de la Universidad Estatal de Ereván. Varios años presidió la Junta de la Unión de Escritores de Armenia.

LA CASA DE LA MADRE

Normalmente no llamo a la puerta de la casa de mi madre: ella se despertará si está durmiendo o si no está durmiendo, igualmente, oye mal. Tengo la llave y abro la puerta yo mismo. Llevo cuatro o cinco meses sin verla a mi madre. Moscú, extranjero, muchas faenas, una grande y otra pequeña, «¡oh, si tuviera tiempo!», y así siempre. Finalmente, abro la puerta, aunque es de día, la luz del pasillo no está apagada y brilla con una fragante blancura.

—¡Señora, madre... !

Ninguna respuesta. Ningún ruido de pasos...

—¡Mamá...!

Entro en la habitación: la cama está cuidadosamente hecha, las almohadas hinchadas y bien mullidas están ordenadas unas sobre otras, el suelo está limpio, la radio encendida. Mi madre siempre tiene la radio puesta. «Como si fuese uno más» —dice— «cada vez que entro o salgo hablo conmigo misma, es como si alguien más estuviese en casa y me contestase». Mamá no está en la cocina, ni en el balcón. Tiendo la mano hacia el cable de la radio con una indiferencia habitual y tirando de él apago la radio. Me echo en el viejo sofá cubierto de terciopelo verde. ¡Está bien!, incluso es mejor que mamá no esté en casa. ¿A ver, si tiene algo de beber mi preciosa madre? Me levanto vagamente, abro el frigorífico. Hay media botella de coñac y dos botellas de cerveza. Hace calor, primero abro la cerveza. Apenas bebo un sorbo: está agria. Miro la etiqueta: ¡claro!, tiene al menos un mes de caducidad. Mi madre sabe que me gusta mucho la cerveza y hace tres o cuatro meses que no he venido al pueblo. Enseguida aparto esos pensamientos de mi mente. Quiero disfrutar plenamente de aquel continente que se llama «soledad» y no pensar en nada, sobre todo

cuando estoy rodeado de un transparente silencio campesino que se llena solamente de las voces esporádicas de unos niños y de los zumbidos monótonos del coro polifónico de unos insectos rurales. La casa de mi madre se ubica fuera del camino, entre los huertos: los coches no pasan por aquí, yo no tengo coche y tampoco pienso tenerlo en el futuro. Me acomodo en los muelles cansados del sofá, procurando no pensar en nada.

He llegado con un objetivo práctico: tengo que convencerla a mi madre de trasladarse a la ciudad, al menos que viva con nosotros durante los meses del invierno. Ya tengo preparado en la mente un discurso bastante influyente. «Es una vergüenza, mamá, —le diré— soy tu único hijo, gracias a Dios, tengo mi casa, es de tres habitaciones; a tu nuera, que yo sepa, la quieres mucho, es que es una vergüenza, ¿hasta cuándo piensas pasar tus días así, en esta plena soledad?».

